Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 19 (403) 16-31 դեկտեմբեր, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Խրամատի ուղղությունը գծված է

Տարին ամփոփելու պահն է հասել: Հայկական իրականության մեջ քաղաքական առումով բավականին թեժ տարի ենք ունեցել: Հայաստանի Հանրապետությունում կառավարություն է փոխվել, նոր կառավարությունը կարծես թե աշխատում է այլ գաղափարախոսությամբ: Հռետորաբանությունն այլ շեշտադրումներ ունի, նոր մոտեցումների, փոփոխությունների հույսեր են արթնացել: Չմոռանանք՝ նախընտրական տարի է Հայաստանում եւ քաղաքական դաշտը գնում է բազմաթիվ միավորումների եւ տարանջատումների:

Սակայն տարին ամփոփելիս որեւէ անձ, քաղաքական գործիչ կամ պաշտոնյա չի կարող շրջանցել 2016թ. ապրիլը: Ապրիլին մենք կանգնեցինք իրականության դեմ հանդիման: Դիրքերում ասվեց քաղաքական ամենակարեւոր պատգամը՝ Աբաջյանի խոսքը. «Ես այս հողը հանձնողի...»:

Հենց ապրիլյան օրերին ապացուցվեց, որ իրոք հայ ժողովուրդը հնարավորություն եւ ունակություն ունի համախմբվելու, որպեսզի մի թիզ հող չհանձնի, որովհետեւ դա մեր հայրենիքն է. Աղդամն ու Քարվաճառը մեր հայրենիքն են, ինչպես Տավուշն ու Գեղարքունիքը, ինչպես Վանն ու Սասունը: Հենց այն օրերին, դեռ համախմբման կրակը չմարած, եղան քաղաքական գործիչներ, որոնք «այդ հողերը» անվանեցին «ամայի, անմշակ տարածքներ», «ոչ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ», իսկ ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահի բնութագրմամբ՝ «դրանք մեզ պետք չեն»: Պահի տակ արված այս արտահայտությունները դեկտեմբեր ամսին գաղափարականացրեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ով մեծ հերոսությամբ ու մեծ անձնազոհությամբ փորձեց դրոշակակիրը դառնալ այդ բոլոր, ինչպես մեր գործընկերն է բնութագրել, «հողատուների»:

Հայկական իրականության մեջ դեռեւս Ղարաբաղյան շարժման առաջին օրերից «հողատուների» ու «ոչմիթիզականների» ներքին պայքարն առկա է եղել: Դեռ առաջին օրերին, երբ Դաշնակցությունը Ղարաբաղ էր փոխադրում առաջին զենքերը, առաջին ինքնաձիգերը, հողատուներն ասում էին՝ «Մեզ բանակ պետք չէ, մեր պաշտպանվածությունը մեր անպաշտպանության մեջ է: Երբ թշնամին տեսնի, որ մենք զինված ենք, բոլորիս կոչնչացնի»: Պատմական ծանրակշիռ փաստարկներով փորձում էին դաշնակցականներին ապացուցել, որ 1915թ. Մեծ եղեռնը հենց այդ «ֆիդայականության» արդյունքն էր: Ժամանակն այլ բան փաստեց...

Ինչ-որ տեղ մեր շնորհակալությունը պիտի հայտնենք ՀՀ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանին: Շնորհակալություն այն բանի համար, որ քաղաքական դաշտում սահմանեց խրամատի ուղղությունը, եւ դա արեց այս վճռորոշ պահին՝ նախքան ՀՀ-ում տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունները:

Չենք կարծում, որ Արցախում որեւէ քաղաքական ուժ, որեւէ քաղաքացի համաձայնվի Տեր-Պետրոսյանի զիջողական քաղաքականությանը: Այդպես են վկայում նաեւ սոցիալական հարցումների արդյունքները: Արցախում Լեւոնին համարում են դավաճան:

Ի վերջո, մեկ անգամ եւս ապացուցվեց՝ Արցախն ու Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բնական դաշնակիցներ են:

Շնորհավոր բոլորիս Նոր տարին:

Ղարաբաղի պայքարը երբեք խոչընդոտ չի եղել Հայաստանի զարգացման համար

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի տարեմուտի խոսքը ընկերներին

Ընկերներ, տարին վերջանում է, նոր տարի է սկսվում, առջեւում էլ խորհրդարանական ընտրություններ են: Բնականաբար, բոլորի ասելիքն այսօր առնչվում է ընտրություններին: Բայց իրականում՝ ինչ որ մենք մտածում ենք, ինչ որ ասում ենք, ինչ որ ապրում ենք, կապվում է Հայաստանի հետ, մեր ժողովրդի հետ եւ մեր ժողովրդի ապագայի հետ՝ անկախ ընտրությունների իրողությունից:

Այս առումով՝ մենք ունենք երեք առաջնահերթություն, որոնք միայն կուսակցական առաջնահերթություններ չեն. դրանք մեր ազգի առաջնահերթություններն են: Երեք օրակարգ ունենք: Երեք օրակարգ, որոնք պայմանավորված են մեկը մյուսով, այսինքն՝ եթե մեկը հաջողի, կհաջողի նաեւ մյուսը, եթե ձախողենք մեկը, կձախողենք նաեւ մյուսը: Այնպես որ՝ դրանք մեզ համար նույնչափ կարեւոր եւ նույնչափ անհրաժեշտ են:

Առաջին օրակարգը. մենք վերջապես պետք է ստեղծենք մի Հայաստան, որն ունենա զարգանալու՝ բոլոր երկրների հետ համաչափ կարելիություն: Զարգացող Հայաստան պետք է ունենանք բոլոր առումներով՝ տնտեսական, մշակութային, քաղաքակրթական եւ մյուս առումներով: Զարգացող Հայաստանի պատկերացումը զանազան մարդկանց մոտ տարբեր է: Մեկն ասում է՝ Հայաստանը կզարգանա, եթե Ղարաբաղը տանք: Ղարաբաղն է նրանց համար պրոբլեմը. Ղարաբաղը տանք՝ Հայաստանը կզարգանա: Մյուսն էլ ասում է՝ ոչ, մարդուց է կախված, մարդիկ են վատը, այս մարդկանց փոխենք մեզանով՝ Հայաստանը կզարգանա: Մեկն էլ ասում է, որ մենք պետք է դուրս գանք ռուսական ճամբարից, գնանք Արեւմուտք, որ Հայաստանը զարգանա:

Բազմաթիվ մոտեցումներ կան, բայց մենք, արդեն երկու տասնամյակից ավելի, մի ուղղություն ենք որդեգրել եւ այդ ուղղությունը շարունակում ենք: Մենք ասում ենք՝ Հայաստանի պրոբլեմները համակարգային են եւ համակարգային փոփոխություններ են անհրաժեշտ: Մենք այդ փոփոխությունների հիմքը դրել ենք նոր Սահմանադրությամբ: Դեռ շատշատերը չեն զգում, թե այս Սահմանադրությունն ինչ էական դեր կարող է ունենալ Հայաստանի կյանքում: Ընտրություններից հետո մենք կտեսնենք, որ Սահմանադրությամբ պայմանավորված համակարգային փոփոխությունները որքան էական են եւ որքան խորքային: Մենք այդ համակարգային փոփոխության դրոշակակիրն ենք եղել, ջատագովն ենք եղել, գաղափարախոսն ենք եղել, պահանջողն ենք եղել 1991 թվականից սկսած: Այդ թվականից սկսած՝ մենք մենակ ենք հետապնդել փոփոխության այդ պահանջը, որ տեղի ունեցավ միայն անցյալ տարի: Մենք մենակ ենք եղել, վերջում են մեզ միացել գրեթե բոլորը:

Մենք ասել ենք՝ ընտրական օրենսգիրքը պետք է փոխվի այնպես, որ հենց օրենքը երաշխավորի ընտրությունների արդարությունը: Այսօր ես կասեմ՝ կարեւոր չափով այդ հարցը լուծված է: Այսինքն, առնվազն թվում է, որ ընտրատեղամասերում խախտումները բացառված են: Եվ սա մենք ենք արել, սրա պահանջը մենք ենք ունեցել: Մյուսներն ամեն ինչ պայմանավորել են անձերի փոփոխությամբ: Մենք ամեն ինչ պայմանավորել ենք համակարգային փոփոխությամբ:

Մենք իրականում, ընկերներ, հաջողել ենք մեր քաղաքական ուղղվածության առումով, մեր քաղաքականության մեջ, մեր ուղեգծի մեջ: Չկա պահանջ, որ մենք դրած լինենք 1991 թվականից եւ այսօր լուծված չլինի: Սակայն խնդիր կա: Խնդիր կա, թե այս գարնանը՝ ապրիլին, որ ուժն է հաղթելու: Արդյո՞ք այն ուժը, որ հասկանում է այս Սահմանադրության կարեւորությունը, որ իրականացնելու է այս խորքային փոփոխությունները, աշխատելու է, որ անարդարության արմատը վերանա այս երկրում, հասնելու է նրան, որ մեր երկրում որակը գնահատվի եւ ոչ փողը: Կկարողանա՞ այդ ուժն այս ամենն առաջ տանել: Թե՞ կգա մի ուժ, որը կձախողի այս աշխատանքը:

Ես հավատում եմ, անկեղծ եմ հավատում, որ համակարգային փոփոխությունների ուժը մենք ենք: Այս սահմանադրության ակունքներում կանգնած ենք եղել մենք: Մենք հավատացած ենք արել՝ ինչ որ արել ենք: Մենք քաղաքական, կուսակցական ինչ որ շահ հետապնդելու առումով չէ, որ գնացել ենք այս փոփոխություններին: Կարող է նաեւ՝ մեզ հետ եղել են մարդիկ, որ հակառակն են մտածել: Բայց մենք մտածել ենք՝ անել մի բան մեր երկրի համար, որը մեր կարծիքով ճիշտ է, որ, կարծում ենք, հիմնական փոփոխություն կարող է բերել, որ նոր ուղի կբացի մեր երկրի առջեւ: Եվ մենք այդ առումով արել ենք մեր գործը: Մնում է, որ մենք կարողանանք մեր գործը շարունակել:

Մեր ***երկրորդ օրակարգը*** Ղարաբաղն է: Զարգացող Հայաստանը գլխավոր երաշխիքն է Ղարաբաղի՝ Ղարաբաղի պայքարի մեջ հետդարձ չունենալու, նահանջ չունենալու, վերջնական դարձնելու մեր հաջողությունները:

➔ 2

Ղարաբաղի պայքարը երբեք խոչընդոտ չի եղել Հայաստանի զարգացման համար

1 ← Ղարաբաղի պայքարը խոչընդոտ չէ, երբեք խոչընդոտ չի եղել Հայաստանի զարգացման համար: Այլ երեւույթներ են պատճառ դարձել, որ մեր զարգացումը դանդաղել, ավելի նվազ թափ է ունեցել: Բայց երբեք Ղարաբաղը չի եղել պատճառը, որովհետեւ պատերազմը չարիք է, եթե դու այն չգիտակցելով ես դիմագրավում: Իսկ եթե դու գիտակցում ես, որ դա լինել-չլինելու հարց է, գիտակցում ես, որ դա քո արժանապատվության հարցն է, ապա քո երկիրն էլ այնպես ես կազմակերպում, քո տնտեսությունն էլ այնպես ես կազմակեպում, քո բանակն էլ այնպես ես կազմակերպում, որ կարողանաս թե զարգանալ, թե հաղթել: Եվ ես կարող եմ շատ այդպիսի երկրներ ասել, որ, պատերազմի մեջ լինելով, կարողացել են զարգացում ապահովել:

Վերջապես անընդունելի է, որ կան մարդիկ, որ երկար, շատ երկար տարիներ այս երկրում անընդհատ մտածում են Ղարաբաղի հարցից ձերբազատվելու մասին: Ես չեմ ասում, թե նրանք հակաղարաբաղյան դիրքորոշում ունեն: Բայց նրանք մտածում են, որ Ղարաբաղի հարցը խոչընդոտ է, դա դժվարություն է, որը պետք է ոչ թե հաղթահարել, այդ դրանից ձերբազատվել: Սա թույլ մարդու, մարդկանց թույլ տեսակի մոտեցում է: Չասելու համար ապազգային, չասելու համար այլ որակումներ, այսքանն ասեմ՝ թույլ մարդու մոտեցում է, իսկ թույլ մարդը չի կարող դերակատար լինել երկրի զարգացման եւ հզորացման գործում: Ուժեղ կամքի տեր, հայրենասեր մարդն է, որ կարող է հայրենիքի զարգացման խնդիրը դարձնել իր կյանքի նպատակը: Եվ ով դարձրել է Հայաստանի զարգացումն իր կյանքի նպատակը, նրա համար պարտադիր է նաեւ Ղարաբաղի հաղթանակը, Ղարաբաղի վերջնական ազատագրումը: Այլ կերպ չի կարող լինել: Եթե մարդը չի մտածում Ղարաբաղի պայքարը հաղթանակի տանելու մասին, չի կարող մտածել նաեւ Հայաստանի զարգացման մասին: Նման մոտեցումն անընդունելի է: Մեզ համար կարեւոր է, որ Ղարաբաղի պայքարը մենք տանենք մինչեւ հաղթանակ: Որովհետեւ դա էլ է երաշխիք Հայաստանի զարգացման համար: Հաղթող ուժն է, որ կարող է կարեւորություն տալ բարոյական արժեքներին, հաղթող ազգն է, որ կարող է արժանապատվություն ունենալ եւ տեր կանգնել իր արժանապատվությանը, որ կարող է մի երկիր կառուցել, որ օրինակելի դառնա:

Եթե մարդն այդ արժեքներին չի հավատում, նա չի կարող հավատալ նաեւ մյուս արժեքներին: Եթե ես լավ մարդ եմ, անպայման նաեւ ընտանիքի լավ հայր եմ. չի կարող այլ կերպ լինել: Մարդը չի կարող տեղ-տեղ լավը, իսկ տեղ-տեղ վատը լինել: Ղարաբաղի հարցում, ես հավատում եմ, դժվարություններ շատ կան, բայց ամենամեծ դժվարությունը, ամենադժվար հաղթահարելին ներքին տկարությունն է, ներազգային ընկճումն է: Եվ դա է, որ մենք պետք է թույլ չտանք, եւ հենց այդ պատճառով մենք այս ընտրություններում պետք է հաջողենք: Պետք է հաջողենք ոչ թե մեզ համար, այլ Ղարաբաղի համար, Հայաստանի համար: Պետք է հաջողենք Հայաստանի եւ Ղարաբաղի վաղվա օրվա համար եւ ոչ թե մեր անձնական կարիերայի ու բարօրության համար:

Ես հավատում եմ այդ հաջողությանը: Ձեզնից շատերի հետ մենք Ղարաբաղում ենք եղել: Նույն մղիչ ուժը, որ մեզ մղում էր Ղարաբաղում դժվարություններ հաղթահարելու, կռվելու, այսօր մեզ պետք է մղի այս ընտրություններին հաջողելու, որովհետեւ դրանով է պայմանավորված Հայաստանի եւ Ղարաբաղի վաղվա օրը: Եթե մենք այդպես չմտածենք, եւ այդ նվիրվածությամբ այդ պայքարին չմղվենք, նշանակում է՝ սուտ է, մեր դաշնակցական լինելն էլ սուտ է, մեր անցյալի պայքարն էլ սուտ է: Լեզուս չի դառնում ասելու՝ մեր զոհված ընկերների հիշատակը մենք դրանով կտրորենք-կանցնենք: Մեր զոհված ընկերների գործի շարունակությունն ասում է՝ հիմա մենք պետք է խրամատում լինենք, այն խրամատում, որ ապահովելու է Ղարաբաղի հաղթանակը եւ Հայաստանի զարգացումը: Սրանք իրարից անջատ երեւույթներ չեն, միմյանց մասնավորաբար հակադրվող երեւույթներ չեն, ընդհակառակը՝ մեկը մյուսով պայմանավորված երեւույթներ են: Եվ դա մենք պետք է կարողանանք անել:

Երրորդ օրակարգը, որ մենք ունենք, որ, ես կարծում եմ, առաջինի եւ երկրորդի չափ կարեւոր է, արտաքին միջամտությունների բացառումն է մեր երկրում: Մեր ժողովուրդն իր իմաստնությամբ, մեր ժողովուրդն իր համոզմունքներով, իր պատմությամբ, Ղարաբաղում կերտած հաղթանակով աշխարհին պետք է ապացուցի, որ կարող է ինքն իր գլխի տերը դառնալ, եւ ժամանակավոր դժվարությունները երբեք ու երբեք չպետք է պատճառ լինեն, պատրվակ դառնան արտաքին միջամտության: Ես հասկանում եմ՝ այսօր աշխարհում շատ-շատ երեւույթներ իրար հետ փոխկապակցված են: Անկախությունը չի նշանակում առանձնացում: Ես հասկանում եմ՝ պետք է ապրել աշխարհի հետ, բայց պետք է մեր ազգային շահի առումով բացառել արտաքին միջամտությունը մեր երկրում: Ոչ Արեւմուտքը, ոչ Արեւելքը, ոչ Հյուսիսը եւ ոչ Հարավը իրավունք չունեն մեր երկրում վիճակ ստեղծել մեր դեմ, ավելի ճիշտ՝ մերոնց միջոցով մեր դեմ վիճակ ստեղծել: Մենք դա պետք է բացառենք: Այլ խոսքով՝ դրան ասում են 5-րդ շարասյուն: Ես չեմ ասում, որ բոլոր արտաքին ուժերը մեր թշնամիներն են, բայց բոլոր արտաքին ուժերն էլ ունեն ազգային շահի իրենց գիտակցությունը, որտեղ մեր շահի գիտակցությունը հարաբերության մեջ կարող է շատ թույլ լինել: Որեւէ պետության համար Լաչինը, Քելբաջարը, Զանգելանը ի՞նչ արժեք ունեն: Մեզ համար է, որ դրանք արժեք ունեն, որովհետեւ դա հայրենիք է, եւ նաեւ մեր անվտանգության երաշխիքն է: Իրենց համար դա ի՞նչ արժեք ունի՝ կարելի է տալ Ադրբեջանին, դրա դիմաց ինչ-որ բան շահել: Կարելի է, իրենք այդպես են մտածում: Իրենք մեղավոր չեն, մեղավորը մենք կլինենք, եթե թույլ տանք, որ նրանք մեր մեջ եղանակ ստեղծեն: Մենք պետք է բացառենք արտաքին միջամտությունները: Եթե չկարողացանք բացառել դա՝ Հայաստանը չի զարգանա, Ղարաբաղում հաղթանակ չենք ունենա:

Մենք պետք է դառնանք այս երկրի ապահովության, անվտանգության երաշխիքը: Այդ երաշխիքը միայն սահմանին կանգնելն ու կռվելը չէ: Այդ երաշխիքը պետք է ապահովենք նաեւ նրանով, որ թույլ չտանք մեր մեջ օտարը ոտքի տեղ ունենա, կարողանա մեր մեջ եղանակ ստեղծել, վիճակ ստեղծել: Մենք ոչ մի երկրի հետ էլ թշնամի չենք, ոչ մեկի վատն էլ չենք ուզում, բայց մենք մեր լավի գիտակցությունն ունենք: Պետք է գիտակցենք, որ այն, ինչ մենք անում ենք օտարին դուր գալու համար կամ օտարին միջամտելու հնարավորություն տալու համար, անընդունելի է, եւ մենք դա պետք է բացառենք: Դա պետք է բացառվի, որպեսզի մեր երկիրը զարգանա, որպեսզի Ղարաբաղում մենք նահանջ չարձանագրենք: Սրա համար պետք է մենք այս ընտրություններում հաջողենք: Մենք ընտրություններին պետք է հաջողենք ոչ թե առանձին-առանձին մեր անձի համար ավելի լավ պայմաններ ստեղծելու համար, այլ Հայաստանի եւ Ղարաբաղի համար, մեր հայրենիքի համար, մեր ժողովրդի համար:

Հավատացած եմ, դրա երաշխավորը Դաշնակցությունն է: Հավատացած եմ, մենք այսօր էլ ՝ նախորդ ընտրություններում ունեցած քվեների չափից շատ ավելի մեծ դերակատարում ենք ունեցել այս երկրում եւ շատ ավելի մեծ գնահատանքի ենք արժանացել: Բայց տարբեր է լինելու, եթե մենք կարողանանք իրապես, մեր քվեների առումով մեր բաժինը մեծացնել երկրում:

Ընկերներ, այս գիտակցությամբ է, որ մենք պետք է պատրաստվենք եկող տարվան, այլապես մենք մեր կրավորականությամբ, անգործությամբ, տատանումներով, հանգստասիրությամբ կամա-ակամա մեր երկրին ու մեր ժողովրդին վնասած կլինենք: Մենք պետք է կարելին անենք, կարելին անենք հենց այն հասկացողությամբ, որ եթե ճակատում լինեինք եւ թշնամու դեմ կռվեինք, կանեինք: Մենք մեր ներքին այս մրցակցության մեջ մեր առավելագույնը պետք է ներդնենք, որպեսզի կարողանանք հաջողության հասնել:

ՀՅԴ Արցախի Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչը ամփոփում է տարին

- Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կբնութագրեիք 2016 թվականը:

- 2016 թվականը բավականին ծանր էր ոչ միայն ՀՅԴ Արցախի կառույցի, այլեւ Արցախի եւ, ընդհանրապես, ողջ հայության համար: Տարվա սկզբից ի հայտ եկան այն մարտահրավերները, որոնք մեզ կանգնեցրին դժվար կացության առջեւ: Դեռեւս 2015-ի դեկտեմբերին՝ 2016-ի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, Դաշնակցության կողմից արված հայտարարության մեջ ահազանգ էր հնչեցվում, որ մենք կանգնած ենք օրեցօր ահագնացող ադրբեջանական ագրեսիայի վտանգի առջեւ, որից ելնելով՝ առաջարկեցինք, որ բյուջեի սոցիալական ուղղվածությունը վերափոխվի եւ այն ուղղվի անվտանգության բնագավառին: Ապրիլին սկսված ռազմական գործողությունները ստիպեցին վերանայելու մեր ներքին կյանքը, մեր քաղաքականությունը թե՛ տնտեսական, թե՛ քարոզչական եւ թե՛ պաշտպանության, անվտանգության բնագավառներում: Բնականաբար, առաջնայինը մեր ժողովրդի անվտանգության համակարգի ամրապնդումն էր եւ, որպես համահայկական դաշտում գործող կուսակցություն, ՀՅԴ Արցախի կառույցը դարձավ այն կարեւոր օղակներից մեկը, որի միջոցով համակարգվեցին մի շարք խնդիրներ Սփյուռքի համայնքների հետ:

- ՀՅԴ Արցախի կառույցն ի՞նչ հարաբերություններ է ունեցել արտասահմանի իր կուսակցական գործընկերների հետ:

- Առիթ ենք ունեցել տարբեր միջոցառումների, տարբեր ձեռնարկների պատրվակի տակ լինելու Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Մեր կառույցի մի շարք պաշտոնյաներ եղել են Ամերիկայում, Եվրոպայում, Միջին Արեւելքի երկրներում, Ավստրալիայում, մասնակցել ՀՅԴ 125-ամյակին եւ Արցախի անկախության 25-ամյակին նվիրված տոնակատարություններին, այդ այցելությունների ընթացքում հանդիպել նաեւ ՀՅԴ կառույցից դուրս գործող այլ քաղաքական ուժերի, այլ պատգամավորական մարմինների ներկայացուցիչների հետ, որոնց ներկայացվել է Ղարաբաղյան հիմնահարցի մանրամասները, այն մարտահրավերները, որ կանգնել է հայ հանրության առջեւ, այն կարեւոր ուղղությունները, որ նախանշվել են որպես գերակա: Որոշակի աշխատանքներ են տարվել Արցախի միջազգային ճանաչման ուղղված գործընթացներում:

- 2016 թվականը Արցախի եւ Հայաստանի համար հոբելյանական տարի էր. տոնվեց 2 հայկական հանրապետությունների անկախության 25-ամյակը: Արդյո՞ք բավարար եք համարում տոնական միջոցառումների մակարդակը:

- Հոբելյանական միջոցառումների համար ստեղծված պետական հանձնաժողովը նախատեսում էր մեծ շուքով ոչ միայն Արցախում, այլեւ նրա սահմաններից դուրս՝ Եվրոպայում, Ռուսաստանում տոնելու անկախության 25-ամյակը, սակայն ապրիլյան իրադարձություններն ստիպեցին այլ կեցվածք ընդունելու, որոշակի սահմանափակումներ մտցնելու միջոցառումների ցանկում: Այնուամենայնիվ, խորհրդանշական է, որ Արցախի անկախության 25-ամյակի միջոցառումների մեկնարկը տրվեց Հալեպում, որտեղ հրավիրված էի պաշտոնական խոսք փոխանցելու: Այցի ընթացքում Սիրիայի Արաբական Հանրապետությունում առիթ ունեցա անդրադառնալու ոչ միայն Արցախի ժողովրդի անցած 25 տարվա ուղուն, այլեւ մեկ անգամ եւս բարձրաձայնելու մեր համատեղ ջանքերի եւ մեր միասնականության դրսեւորման անհրաժեշտությունը: Ճակատագրորեն նույն իրավիճակում հայտնված հայ ժողովրդի 2 հատվածների մարտահրավերները 2016 թվականին նույնն էին՝ մի տարբերությամբ միայն, որ մեկը հայրենիքում է, մյուսը՝ հայրենիքից դուրս:

- Որպես ԼՂՀ ԱԺ-ում «Դաշնակցության» խմբակցության ղեկավար, ինչպե՞ս կգնահատիք խմբակցության գործունեությունը:

- 2016 թվականին Արցախի Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցությունը, հավատարիմ մնալով իր նախընտրական ծրագրերին, իր աշխատանքները կենտրոնացրեց ոչ միայն օրենսդիր դաշտի կատարելագործմանը, այլեւ ընտրողների առջեւ բաց ճակատով ներկայացավ՝ հաշվետվություններ ներկայացնելով կատարված աշխատանքների վերաբերյալ, անմիջական կապ հաստատելով՝ ի հայտ բերելու հանրության առջեւ ծառացած այն խնդիրները, որոնք կարոտ էին լուծման եւ որոնք ոչ միայն անհատական, այլեւ համապետական նշանակության խնդիրներ են:

➔ 3

ՀՅԴ Արցախի Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչը ամփոփում է տարին

2 ← Այդ իսկ առումով՝ լինելով տարբեր շրջաններում, մենք հանդիսացանք այն կարեւոր օղակը, որն ապահովում է իշխանություն-ժողովուրդ կապը, եւ մեր միջամտությամբ հնարավորինս տրվեցին լուծումներ:

«Դաշնակցություն» խմբակցությունը հանդես եկավ նաեւ մի շարք օրենսդրական նախաձեռնություններով, մասնավորապես՝ Ազգային ժողովի կողմից քննարկման դրվեց եւ հավանության արժանացավ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման մասին օրինագիծը:

Տարեվերջին մենք ակտիվորեն ներգրավված ենք 2017 թվականի բյուջեի քննարկումներին:

«Դաշնակցություն» խմբակցությունը միշտ էլ կարեւորել է բյուջեի ուղղվածությունը եւ նրա ռազմավարական ուղղությունները:

2017 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումները տարբեր ձեւաչափերով մեզ հնարավորություն են տվել խորապես ընկալելու եւ նաեւ որոշակիորեն ազդելու իրատեսական բյուջե ունենալու համար:

Գնահատելի է, որ գործադիրը ներկա տնտեսական ու ֆինանսական սուղ պայմաններում տրամադիր է հեռանկարային նոր ծրագրեր կյանքի կոչելուն, որում տեղ են գտել նաեւ Դաշնակցության մի շարք առաջարկներ: Հատկապես շեշտելի է անվտանգության համակարգի ուժեղացմանն ուղղված հատկացումների միտումները:

2017 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ ԼՂՀ կառավարությունը ստիպված էր այն հարմարեցնել 2016 թ. ապրիլյան դեպքերից հետո ստեղծված իրավիճակին, ինչը բնական էր: Տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակը եւ աշխարհաքաղաքական զարգացումները չեն բացառում իրավիճակի սրացումներ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Դրանից ելնելով՝ «Դաշնակցություն» խմբակցությունն առաջարկել է գործադիրին՝ առաջիկա երկու ամիսների ընթացքում մշակել եւ ԱԺ-ին ներկայացնել ճգնաժամային բյուջեի նախագիծ՝ հավանական զարգացումները առավելագույնս հեզասահ հաղթահարելու համար:

- Նախատեսվում է, որ հաջորդ տարվա սկզբին հանրաքվե անցկացվի ԼՂՀ Սահմանադրության բարեփոխումների եւ նոր Սահմանադրության համար: Ի՞նչ դիրքորոշում է ընդունել Դաշնակցությունն այդ ուղղությամբ:

- 2016թվականը նշանավորվեց նաեւ Սահմանադրական բարեփոխումների քաղաքական լուրջ գործընթացով: Դեռեւս փետրվարին մեկնարկած քննարկումների փուլը, որն իր մեջ ներառում է խորհրդարանական եւ արտախորհրդարանական բոլոր ուժերը, ի հայտ բերեց քաղաքական ուժերի բեւեռվածությունը գործող կիսանախագահական համակարգից խորհրդարանական համակարգին անցնելու վերաբերյալ: Սակայն քննարկումների ընթացում, մանավանդ՝ պայմանավորված ապրիլյան իրադարձություններով, քաղաքական վեկտորը փոխվեց եւ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից ներկայացվեց կենտրոնացված նախագահական համակարգ ունենալու հայեցակարգը: ՀՅԴ Արցախի կառույցն իր անհանգստությունն արտահայտեց այդ հայեցակարգի վերաբերյալ: Սահմանադրության նախագիծը հրապարակվեց նոյեմբերի 8-ին, Դաշնակցությունը հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ եւ քաղաքական որոշակի պահանջներով: Բարեփոխումների նախագիծն արդեն ներկայացվել է ԱԺ, եւ 2017 թվականի փետրվար-մարտ ամիսներին այն կդրվի համաժողովրդական քվեարկության: Մենք բարձրաձայնում էինք, որ Արցախի պարագայում մեզ համար ընդունելի է, որ խորհրդարանական կառավարման որոշ դրույթներ ներգրավվեն վերջնական տարբերակի մեջ: Մենք 4 տասնյակից ավելի առաջարկություններ ենք ներկայացրել, որոնք տեղ չեն գտել ԱԺ-ում Սահմանադրության նախագծի մեջ: Ակնկալում ենք, որ Սահմանադրության շուրջ քննարկումները կարդյունավորվեն եւ Արցախում գործող քաղաքական ուժերը կկարողանան առաջնորդվել միասնական մոտեցումներով, որոնք պետք է ամրապնդեն երկրի զարգացման արդյունավետ ուղին եւ անվտանգությունը:

- Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ զարգացումներ ունեցավ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացն անցնող տարում:

- 2016 թվականին Հայաստանի որոշ քաղաքական շրջանակների կողմից հնչեցին՝ ղարաբաղյան կարգավորման հարցում որոշակի հողային զիջումների միջոցով հասնել վերջնական տարբերակին, որին, որպես պատասխան, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ռուսական «Վեստի» լրատվական ծառայությանը տված հարցազրույցում տվեց «Մադրիդյան», ապա նաեւ «Կազանյան» փաստաթղթերին միանալու «պատրաստակամությունը», որում հնչեց այն տեսակետը, որ ղարաբաղցիներն են որոշելու Ղարաբաղի հետագա ճակատագիրը եւ ուրիշ ոչ-ոք իրավասու չէ այդ հարցում:

Հրապարակվեց նաեւ IPSC սոցիոլոգիական ընկերության կողմից 2016 թվականի մարտին արված սոցիոլոգիական հարցման արդյունքները, որում ղարաբաղցիների բացարձակ մեծամասնությունը (համարյա 90%-ը) դեմ էր արտահայտվել հողային որեւէ զիջումների:

Սակայն տարեվերջին հայ հասարակության մեջ զայրույթի ալիք առաջացրեց ՀԱԿ համագումարում Լեւոն տեր-Պետրոսյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 17-ին հողային զիջումների մասին արված հայտարարությունը՝ անհանգստության տեղիք տալով թե՛ մեր կառույցում, թե՛ ողջ արցախցիների մոտ: Այն իր մեջ մեծ վտանգներ է պարունակում, եւ կարող եմ վստահ ասել, որ Ղարաբաղում ոչ-ոք չի կիսում այդ պարտվողական կեցվածքը:

- Ի՞նչ պատգամ ունեք Արցախի ժողովրդին 2017 թվականի շեմին:

- Խոսքս ամփոփելով՝ արցախահայությանը կցանկանայի մաղթել խաղաղ լուսաբացներ ու ամանորյա շնորհավորանքներով միանալ մեր բոլոր բարի կամեցողներին:

Հարցազրույցը՝ Լիլիա Բաղրյանի

ԼՂՀ ԱԺ պատգամավորներ VS Լեւոն Տեր-Պետրոսյան

ԼՂՀ ԱԺ մի շարք պատգամավորներ անդրադարձել են դեկտեմբերի 27-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Արցախյան հիմնախնդրի կարգավորման մասին ելույթին:

Նա մասնավորապես նշել էր. «Լեռնային Ղարաբաղի հարցով բանակցային սեղանին դրված է տարածքների դիմաց Ղարաբաղին կարգավիճակ տալու տարբերակը: Այսօր բանակցությունների սեղանին, ըստ էության, դրված է կարգավորման փոխզիջումային նույն առաջարկը, ինչ 1997 թվականին: Այն է՝ որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու, իսկ վերջնական կարգավիճակի հարցը ապագային թողնելու տարբերակը՝ երաշխավորված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում խաղաղապահ ուժերի տեղակայմամբ»:

Ներկայացնում ենք հայտարարությանը արձագանքած քաղաքական գործիչների կարծիքները:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի կարծիքով՝ նման հայտարարությունը նախընտրական քարոզարշավի ակնհայտ տարրեր է պարունակում եւ այդ համատեքստում էլ պետք է դիտարկվի՝ հաշվի առնելով ամիսներ անց Հայաստանում տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունները:

«Ուղերձները, որ հռչակեց՝ «մի մասը զիջենք, մյուս մասը պահելու համար», «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն», կամ որ նույնն է՝ «քիրվայություն, քիրվայություն մինչեւ վերջ», լավ հիմք էին ընտրություններում հաջողելու համար,- նշել է Դավիթ Իշխանյանը: - Հաշվարկը թերեւս այն է, որ որեւէ ժողովուրդ չի ձգտում պատերազմի՝ միշտ էլ խաղաղությունն ավելի գերադասելի է, քան պատերազմը: Սա նկատի ունենալով՝ պարզապես փորձում է խաղալ ժողովրդի զգացմունքների հետ: Հավանաբար հույս ունի, որ ինչ-որ շրջանակներ կարձագանքեն իր կոչին՝ խորամուխ չլինելով՝ ո՞րն է այդ «խաղաղության» գինը»:

ԼՂՀ ԱԺ «Շարժում-88» խմբակցության ղեկավար Էդուարդ Աղաբեկյանի կարծիքով՝ Ստեփանակերտից բացի ոչ ոք իրավունք չունի խոսելու Ղարաբաղյան հակամարտության լուծման մասին: «Նման հայտարարությունները պարտվողական տրամադրություններ են սերմանում՝ ավերիչ հետեւանքներով: Ղարաբաղյան հարցի լուծումը չպետք է բերի ներկայիս անվտանգության մակարդակի իջեցմանը»,- նշել է Է. Աղաբեկյանը:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Արմեն Սարգսյանը «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում շեշտել է. «Ես ամաչում եմ, որ Հայաստանն ունեցել է Լեւոն Տեր-Պետրոսյանի նման նախագահ: Եթե ուսումնասիրեք իր քաղաքականությունը Շահումյանի հանձման ժամանակ, ապա կտեսնեք, որ իմ խոսքերն օդում չեն: Եթե մինչեւ հիմա մտածում էի, որ դա իր կարծիքն է, կոնֆլիկտը բարդ է եւ նա այդ լուծումն է գտնում, հիմա եկել եմ այն եզրակացության, որ ինքը պարզապես դավաճան է»:

ԼՂՀ ԱԺ «Ժողովրդավարություն» խմբակցության ղեկավար Վարդգես Բաղրյանը նշեց. «Որեւէ նախագահ իրավունք չունի ժողովրդի փոխարեն որոշում կայացնելու»ե:

Ըստ պատգամավորի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը հին երգն է երգում, եւ այսօր խոսել ինչ-որ փուլային զիջումների մասին՝ չտեսնելով դրա հետեւում որեւէ լույսի շող, դավաճանական արարք է համարում:

«Այն ժամանակ էլ եմ ասել, հիմա էլ եմ ասում՝ պարտվողական տրամադրությունը որեւէ լավ բանի չի կարող հանգեցնել: Ո՞րն է այն երաշխիքը, որ այդ փուլային տարբերակը, որն առաջարկում է Լեւոն Տեր-Պետրոսյանը, ապահովելու է Արցախի անվտանգությունը: Ո՞վ է ապահովելու: Ինչ-որ խաղաղապահ ուժե՞ր»,- նշել է Վ. Բաղրյանը եւ ավելացրել, որ մենք տեսել ենք խաղաղապահ ուժեր՝ ի դեմս Խորհրդային բանակի, եւ գիտենք, թե ինչ անօրինություններ են նրանք այստեղ իրականացրել:

«Միայն նրանց հեռանալուց հետո ենք մենք կարողացել ազատագրել մեր երկիրը, ընդ որում՝ ոչ ամբողջությամբ», - շարունակել է նա եւ ավելացրել, որ Արցախում ոչ ոք չի մոռացել կորուսյալ հայրենիքի մասին եւ նման պարտվողական կեցվածքը միանշանակ անընդունելի է ամբողջ ժողովրդի կողմից:

ԼՂՀ ԱԺ «Հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր Թովմասյանը, մեկնաբանելով ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը, նշել է, որ Հայաստանում կան մարդիկ, ովքեր այդ տեսակետի հետ համամիտ են:

«Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հիմնական պատճառներից մեկը, երբ նա 2-րդ անգամ ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ, «Պատերազմ, թե խաղաղություն» լոզունգն էր, որտեղ հստակ շարադրված էր այն ամենը, ինչը նա կրկնել է դեկտեմբերի 17-ին: Նա որեւէ նոր բան չասեց»,- նշել է Ա. Թովմասյանը:

ԼՂՀ ԱԺ «Հայրենիք» խմբակցության անդամ Արզիկ Մխիթարյանը, անդրադառնալով Լեւոն Տեր-Պետրոսյանի որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու հայտարարությանը, նշել է, որ դա փոքրոգի եւ վախկոտ մարդու արտահայտություն է:

«1997 թվականին ես նույնպես ներկա էի Գորիսում տեղի ունեցած ամենամեծ ժողովրդական ցույցին, որն իր ըմբոստությունն արտահայտեց Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ, եւ նա գահընկեց եղավ,- նշել է Ա.Մխիթարյանը:- Չեմ կարծում, թե Արցախ աշխարհում կգտնվի գեթ մեկ մարդ, ով կարող է համաձայնել եւ վերադարձ կատարել դեպի 1988 թվականը, դեպի նույն այն իրավիճակը, որ եղել է 70 տարի շարունակ: Ես արհամարհանքով եմ վերաբերում նման գաղափարին»:

Կարծիքները հավաքեց
Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԸ

ԼՂՀ վարչապետի տարեվերջյան ասուլիսը

ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը դեկտեմբերի 27-ին հրավիրել է տարեվերջյան ամփոփիչ մամլո ասուլիս:

Գործադիրի ղեկավարը պատասխանել է կառավարության գործունեությանն ու նախատեսվող ծրագրերին վերաբերող շուրջ երեք տասնյակ հարցերի:

Անդրադառնալով Արցախի անվտանգության ներկա մակարդակին՝ վարչապետը նշել է, որ կառավարության հատուկ հաշվեհամարին փոխանցվել է 5 միլիարդ 474 մլն, ծախսվել՝ 6 միլիարդ 272 միլիոն դրամ: Մոտ 800 միլիոն դրամ ավել ծախսված գումարը վերականգնվելու է արտաբյուջետային այլ միջոցներից:

«Այս ամբողջ գումարի գերակշիռ մասը՝ մոտ 2 միլիարդ, մենք ուղղել ենք սոցիալական խնդրի լուծմանը՝ ապիլյան պատերազմի զորակոչին մասնակցած կամավորների աշխատավարձերին, մնացածը՝ առաջնագիծ»,- նշել է վարչապետը եւ ավելացրել, որ մինչեւ տարվա վերջ ամբողջովին կտրամադրվեն կամավորների վճարները, որի ընդհանուր թիվը կազմում է 20-25 միլիոն դրամ:

Խոսելով Թալիշի վերաբնակեցման ծրագրի մասին՝ վարչապետը նշել է, որ Թալիշ եւ Մատաղիս համայնքների բնակիչների սոցիալական երաշխիքները մի քանի տասնյակ անգամ ավելին են լինելու: «Թալիշ եւ Մատաղիս համայնքների բնակիչների համար մենք ավելի լավ նպաստավոր պայմաններ ենք ստեղծելու, քան դուք պատկերացնում եք: Կա նաեւ նախագահի հանձնարարականը»,- նշել է Ա. Հարությունյանը:

«Հայաստանում ընդունված 1000 դրամների օրենքն Արցախում գործելու է իրավական որոշ խնդիրներ լուծելուց հետո»,- նշել է վարչապետը՝ շեշտելով, որ մարաթոնի օրերին Արցախում մասնակցել են գրեթե բոլորը, Հայաստանում՝ ոչ բոլորը, սփյուռքահայությունը՝ շատ ավելի պասիվ:

«1992 թվականից գործող «Հայաստան» համահայկական հիմնադրամին չհաջողվեց ազգային տուրքի գաղափարը մտցնել ժողովրդի մեջ, կոնկրետ քայլեր ձեռնարկելու մասին հուշեց ապրիլյան պատերազմը: Հայաստանում այդ օրենքն ընդունվել է, մենք պարտավոր ենք միանալ»,- շեշտել է վարչապետը:

Ապաստարանների հարցին անդրադառնալով՝ վարչապետ Արայիկ Հարությունյանը նշել է, որ արձագանքվել է վերանորոգման ցանկացած դիմումի: «Վերջին 10 տարում կառուցված 95 տոկոս շենքերում նախատեսված է համապատասխան կառույցներ՝ նկուղային հարկերի տեսքով, թե թաքստոցների եւ այլն, այդ թվում՝ գյուղերում»,- նշել է Ա. Հարությունյանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընդունվել է «ԼՂՀ 2017 թ. պետական բյուջեի մասին» օրենքը

Դեկտեմբերի 22-ին տեղի է ունեցել ԼՂՀ Ազգային ժողովի հերթական լիագումար նիստը, որի օրակարգում էին «ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը եւ դրան ուղեկցող մի շարք օրինագծեր:

ԼՂՀ ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանը ներկայացրել է բյուջեի նախագիծը՝ հիմնական շեշտը դնելով կատարված փոփոխությունների վրա:

Իր խոսքում նա նշել է, որ համարյա բոլոր խմբակցությունների կողմից առաջարկ է եղել կրկնապատկել քաղպաշտպանության ծախսերը, որին կառավարությունն ընդառաջել է:

Բոլոր փոփոխությունների արդյունքում՝ բյուջեի ծախսերն ավելացել են 185 մլն 244 հազ դրամով, եւ 2017-ի պետական բյուջեի ընդհանուր գումարը կազմել է 94 մլրդ 432 մլն դրամ:

Այնուհետեւ, խմբակցությունները ներկայացրել են իրենց տեսակետները 2017 թվականի գլխավոր ֆինանսական փաստաթղթի վերաբերյալ:

Բյուջեի մասին օրենքի նախագծին դեմ են արտահայտվել «Վերածնունդ» եւ «Շարժում-88» խմբակցությունները: «Այս տարի նույնպես չենք տեսնում ծրագրային բյուջե: Այն ձեւով, ինչ ձեւով ներկայացվում է պետական բյուջեն, թույլ չի տալիս հասկանալու ծախսերի արդյունավետությունը եւ հստակությունը»,- իր ելույթում նշել է «Վերածնունդ» խմբակցության պատգամավոր Հայկ Խանումյանը:

Պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանը խմբակցության դիրքորոշումը հիմավորում է իրականացվելիք քաղաքականության քայլերի ուղղության բացակայությամբ:

Ներկայացնելով «Ժողովրդավարություն» խմբակցության տեսակետը, Վարդգես Բաղրյանն ընդգծել է, որ «վերահաստատելով կառավարության գործունեության համար քաղաքական պատասխանատվության հանձնառությունը, խմբակցությունը կողմ է քվեարկելու 2017թ. պետական բյուջեի մասին օրենքին»:

«Դաշնակցություն» խմբակցությունը եւս կողմ է քվեարկել 2017թ. բյուջեին՝ իր հայտարարության մեջ նշելով. «2017թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ ԼՂՀ կառավարությունն ստիպված էր այն հարմարեցնել 2016 թ. ապրիլյան դեպքերից հետո ստեղծված իրավիճակին՝ ինչը բնական էր: Տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակը եւ աշխարհաքաղաքական զարգացումները չեն բացառում իրավիճակի սրացումներ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Հաշվի առնելով վերոնշյալը, ինպես նաեւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու դրանց հանգուցալուծման կարեւորությունը, «Դաշնակցություն» խմբակցությունը 2017թ. պետական բյուջեի նախագծին քվեարկելու է կողմ»:

«Հայրենիք» խմբակցության անունից Ռոմելա Դադայանը երախտագիտություն է հայտնել գործադիր իշխանությանը ապրիլյան պատերազմի պատճառով հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր հետեւանքներն արագ եւ անցնցում հաղթահարելու, միաժամանակ՝ խոստացված գրեթե 10% աճն ապահովելու համար: «Առիթն օգտագործելով՝ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հանրապետության նախագահին, քանի որ կառավարության ծրագիրը հիմնված է եղել նախագահի նախընտրական ծրագրի վրա»,- ավելացրել է պատգամավորը: Իսկ քննարկվող ֆինանսական փաստաթուղթը խմբակցությունը գնահատել է կայուն, իրատեսական եւ միտված զարգացման:

Եզրափակիչ խոսքում վարչապետ Արայիկ Հարությունյանը շնորհակալություն է հայտնել պատգամավորներին կառուցողական քննարկումների համար: Ներկայացնելով տնտեսության դինամիկ զարգացումը 1996-2016 թթ. (միջինում 9%-ից ավելի աճ), վարչապետը շեշտել է, որ վերջին 10 տարում աշխարհում միայն Արցախին է հաջողվել նման աճ արձանագրել:

Քվեարկության արդյունքում Ազգային ժողովն ընդունել է 2017թ. պետական բյուջեի մասին օրենքը՝ 27 կողմ, 3 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հայտարարությունը «ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Հարգելի գործընկերներ,

«Դաշնակցություն» խմբակցությունը միշտ էլ կարեւորել է բյուջեի ուղղվածությունը եւ նրա ռազմավարական ուղղությունները:

Նախորդ տարիներին մենք հնարավորություն ենք ունեցել գործադիրի հետ միասին առավել կենտրոնանալ բյուջեի ռազմավարական ուղղությունների վրա: Այդ քննարկումների արդյունքում եւ երկկողմ համոզվածությամբ որդեգրվեց անվտանգության պաշարների ստեղծման ու գործնական իրականացման քաղաքականությունը, գյուղի եւ գյուղատնտեսության նկատմամբ որդեգրած նոր քաղաքականությունը եւ բյուջետային հատկացումները, էներգետիկ համակարգում նոր ռազմավարությունն ու ինքնաբավության հասնելը, վերամշակման ոլորտում հաջողություններ արձանագրելը:

2017 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումները տարբեր ձեւաչափերով մեզ հնարավորություն են տվել խորապես ընկալելու, նաեւ որոշակիորեն ազդելու, իրատեսական բյուջե ունենալու համար:

«Դաշնակցություն» խմբակցությունը եւ խմբակցության պատգամավորներն առանձին մի շարք առաջարկություններ են ներկայացրել կառավարությանը, հանդիպել գործադիր իշխանության ներկայացուցիչներին:

Մեր առաջարկությունները վերաբերում էին տարբեր ոլորտների՝ բնակչության անվտանգության, ռազմավարական պաշարների, քաղաքացիական պաշտպանության, տարածքային համաչափ զարգացման, դիվերսիֆիկացված տնտեսության, գյուղի եւ գյուղատնտեսության, ժողովրդագրական վիճակի, բնապահպանության, սոցիալական եւ առողջապահության, կրթության եւ արտաքին ոլորտի հիմնախնդիրներին:

Գնահատելի է, որ գործադիրը ներկա տնտեսական ու ֆինանսական սուղ պայմաններում տրամադիր է հեռանկարային նոր ծրագրեր կյանքի կոչելուն, որում տեղ է գտել նաեւ Դաշնակցության մի շարք առաջարկներ: Հատկապես շեշտելի է անվտանգության համակարգի ուժեղացմանն ուղղված հատկացումների միտումները:

Ինչպես եւ նախորդ տարիներին, մտահոգիչ է կապիտալ շինարարության ոլորտի ծավալների նվազ լինելը, որն իր ազդեցությունն է թողնում (թեկուզեւ ժամանակավոր) աշխատատեղերի ապահովման վրա: Գտնում ենք, որ գործադիրը հավելյալ ջանքեր պետք է գործադրի՝ օգտագործելով նաեւ արտաբյուջետային հնարավորությունները, եւ որոշակիորեն ընդլայնի կապիտալ շինարարության ոլորտը՝ դրանով ժամանակավորապես ապահովելով զբաղվածության նվազագույն աստիճան:

Նոր աշխատատեղերի ավելացման եւ տնտեսական աշխուժություն մտցնելու նպատակով անհրաժեշտ է առավել ուշադրության կենտրոնում պահել արտահանման հարցը:

Ինչ վերաբերում է բյուջեի ուղղվածությանը, գործադիրը, հաշվի առնելով իրական վիճակը, այն հերթական անգամ որակում է սոցիալական ուղղվածության բյուջե:

Ինչպես եւ անցյալ տարի, այս անգամ եւս բարձրաձայնենք, որ մեր պայմաններում սոցիալական ուղղվածության բյուջե ունենալը կարեւոր է: Իրականությունը եւ մեր առջեւ ծառացած մարտահրավերներն ուղղակի թելադրում են մեզ՝ ունենալու պաշտպանության եւ անվտանգության բաղադրիչների ուղղվածության բյուջե: «Դաշնակցություն» խմբակցությունը հուսով է, որ թե տարվա ընթացքում եւ թե ապագայում այս մտայնությունը կդառնա գերիշխող եւ այն գործնական ընթացք կունենա հաջորդ տարվա պետական բյուջեն կազմելիս:

Մեկ կարեւոր հանգամանք եւս: 2017 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ ԼՂՀ կառավարությունն ստիպված էր այն հարմարեցնել 2016 թ. ապրիլյան դեպքերից հետո ստեղծված իրավիճակին, ինչը բնական էր: Տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակը եւ աշխարհաքաղաքական զարգացումները չեն բացառում իրավիճակի սրացումները ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ոլորտներում: Դրանից ելնելով՝ «Դաշնակցություն» խմբակցությունն առաջարկում է գործադիրին՝ առաջիկա երկու ամիսների ընթացքում մշակել եւ ԱԺ-ին ներկայացնել ճգնաժամային բյուջեի նախագիծ՝ հավանական զարգացումներն առավելագույնս հեզասահ հաղթահարելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաեւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու դրանց հանգուցալուծման կարեւորությունը, «Դաշնակցություն» խմբակցությունը 2017թ. պետական բյուջեի նախագծին քվեարկելու է կողմ:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն»
խմբակցություն
22 դեկտեմբերի, 2016թ.

Մենք մեր խաղաղությունն ենք կերտում

Թե երբ ավարտին մոտեցավ 2016 թվականը՝ Արեւելյան օրացույցի Կապիկի տարին, դժվարանում եմ ասել: Ժամանակի հոլովույթը կարծես թե չափից դուրս սրընթաց էր՝ տարվա հետ կապված մեր սպասումների համեմատ: Դարձյալ առկախ մնաց աշխարհի մայրաքաղաքներում տասնամյակներ ի վեր չարչրկվող Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը: Եվ, ինչպես նախորդ տարեդարձին էր, այս անգամ եւս, երբ արդեն նոր տարվա այգաբացն իր ծուղրուղույով ազդարարում է նույն այդ օրացույցի մեկ այլ կենդանակերպի խորհրդանիշ Հրեղեն Աքաղաղը, Արցախում վերստին ահագնացած է անընդհատ թարմացվող ավերիչ պատերազմի վերսկսման հնարավոր վտանգը: Մանավանդ, դեռ չենք էլ հասցրել թեկուզ փոքր ինչ մեղմել Կապիկի տարվա Ապրիլյան պատերազմում նոր սերունդների, հայրենյաց քաջարի պաշտպանների նահատակության համար մեր ապրած անանց ցավն ու կսկիծը:

Բայց ասում են՝ Հրեղեն Աքաղաղի տարին, յուրահատուկ լինելով բոլորի համար, խոստանում է շատ ավելի վառ եւ հիշվող լինել: Տա Աստված: Բայց թե մեզ համար վառ ու անմոռաց ինչ է նա խոստանում՝ առայժմ հարց է: Էհ, ասենք՝ Աստված իր հետ: Արցախցիներիս հույսն ու ապավենը ոչ Արեւելյան օրացույցի խորհրդանիշերն են, ոչ էլ աշխարհի այսօրն ու վաղը սեփական կամեցողությամբ չափուձեւող մեծ մայրաքաղաքների կամքը: Մենք ինքներս՝ առանց աջ ու ահյակ նայելու, մեր խաղաղությունն ենք կերտում եւ ամրապնդում, ինքներս սպեղանի դնում մեր վերքերին ու շարունակում շենացնել հայրենի եզերքը՝ քառորդ դար առաջ մեր իսկ կամքով հռչակված հայոց զուգապետությունը: Բայց ո՞ւմ ապավինելով՝ կարող է օտարները տարակուսած հարցնեն ու հարցնում էլ են: Ինքներս մեզ, իհարկե: Մենք ենք մեր ամենահուսալի ապավենը, մեր համազգային միասնությունն ու համախմբվածությունը հայոց սուրբ առաքելության՝ պատմական հայրենիքի ազատագրության առաջամարտիկների՝ ազատ, ինքնիշխան Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության շուրջ:

Մենք ուժ ենք, անկոտրում ուժ: Քանզի առավել, քան գուցե երբեւէ, միասնական ենք, իրար թեւ-թիկունք: Դիմեք ցանկացած արցախցու, եւ նա նույնը կասի: Անհապաղ, անվարան: Առանց երկար ու բարակ ծանր ու թեթեւ անելու: Արցախյան առածն ասում է՝ պառավը գիտկան չէ, գլխին եկած է: Արցախցին իր ապրած առնվազն վերջին երեք տասնամյա փորձից հստակ գիտե, թե ինչ ասել է ազգովի բռունցքվել, ու թե պետք է՝ նույն այդ բռունցքով չարակամի հոնքամիջին զսպիչ կամ մահացու հարված հասցնել: Այո, հենց այդպես: Ինչպես տասնամյակներ առաջ էր՝ 1991-94-ին, եւ ինչպես ընդամենն ամիսներ առաջ՝ ապրիլին: Արցախցին, ինչպես որ մեր յուրաքանչյուր արյունակից Հայաստանում, թե Սփյուռքում, քաջ գիտակցում է, որ Աստծո կամոք ազգային գոյատեւման ու հարատեւման պատմական մեծ հնարավորություն է տրված մեր ժողովրդին: Ձլացար օգտագործել այն, գեթ պահ մի վարանեցիր, պահ անց դու դու չես մնա, ու քեզ չի մնա, օտարի ոտքի կոխան կդառնա քո նախնյաց բնօրրանը, քո ժառանգների՝ աշխարհում ամենա-ամենաապահով ապագայի երաշխիքը՝ հող հայրենին:

Այս ամենը, կասեք, մենք գիտենք: Հարկավ, գիտենք: Մեծից փոքր: Բոլորս: Կամ՝ երեւի բոլորս: Բայց ես դա ասում եմ գուցե թե առավելապես նրանց՝ այն օտարներից, ովքեր չգիտեն եւ կամ գիտեն, բայց անտարբեր են նախնյաց եզերքում բնավորված ապրելու, արարելու հայի դարավոր երազանքի, պատմական հայրենիքում ի վերջո հաստատված ու կայացած ազգային պետություն-պետություններն աչքի լույսի պես պահելպահպանելու աննահանջ կամքի, մեր հոգեկան կերտվածքի, առհասարակ՝ հայի էթնիկ տեսակի նկատմամբ: Ասում եմ, զորօրինակ, Ղարաբաղյան հիմնախնդրի հարցով միջազգային միջնորդի դեր ստանձնած Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության ղեկավարությանը, նրա Մինսկի խմբի համանախագահությանը՝ սկսած համանախագահ երկրների առաջին դեմքերից մինչեւ նրանց կողմից լիազորված միջնորդ-դեսպանները, ովքեր, այսպես ասեմ՝ բառացիորեն չեն ուզում ընկալել, կամ, եթե ընկալում են, ապա աշխարհաքաղաքական եւ կամ տարածաշրջանային զարգացումներում սեփական ազգային-պետական շահերի թելադրանքով համառորեն անտեսում են խնդրո առարկա հիմնախնդրի, այդ գետնի վրա անցած դարավերջին առաջացած ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության բուն պատմական, քաղաքական, իրավական. սոցիալ-տնտեսական, կրթամշակութային դրդապատճառները:

Արդյունքում ի՞նչ ենք տեսնում: Ինչպես 80-ական թվականների վերջերին էր, այսօր եւս՝ շուրջ երեք տասնամյակ անց, նույն անխաթար Գորդյան հանգույցն է ահավասիկ, որի ծայրերն իրար են ագուցված կարծես թե վերստին անիմանալի ձեւով: Արդյո՞ք միջնորդական առաքելությունն ի զորու է կրկնել Մակեդոնացու դերակատարությունը՝ թրի մեկ հարվածով այն քանդելու համար: Այո՝ համոզված են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունում: Եվ, որպես այդպիսին, մշակել ու, որպես հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունների քննարկման խնդիր, ահա տարիներ ի վեր շրջանառության են դրել Ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման, այսպես կոչված, Մադրիդյան սկզբունքները:

Քանիցս լրամշակված այդ փաստաթղթի դրույթներին, ինչպես հայտնի է, վերջին անգամ անդրադարձ է կատարվել դեկտեմբերի 8-ին, Համբուրգ քաղաքում՝ ԵԱՀԿ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 23-րդ նիստի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների ընդունած համատեղ հայտարարության մեջ: Այն ամբողջությամբ հրապարակվել է մամուլում, ուստի խուսափենք լրիվությամբ վերաշարադրելու անիմաստ գայթակղությունից: Անդրադառնանք փաստաթղթի միայն առանձին առանցքային շեշտադրումների:

Եվ այսպես, նախ՝ կողմերին հիշեցվում է, որ կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկիի եզրափակիչ ակտի սկզբունքների վրա, մասնավորապես՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության, ժողովուրդների հավասար իրավունքների եւ ազատ ինքնորոշման վրա: Ապա՝ փաստաթղթի հեղինակները միաժամանակ, որպես համանախագահող երկրների նախագահների կողմից առաջարկված լրացուցիչ տարրեր, շեշտում են, որ Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանի վերահսկողությանը, բոլոր տեղահանվածներին եւ փախստականներին իրավունք վերապահեն վերադառնալու իրենց բնակության նախկին վայրեր: Վերջապես՝ Լեռնային Ղարաբաղն օժտվում է ժամանակավոր կարգավիճակով, որը «նրան կտա անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքներ», իսկ Լեռնային Ղարաբաղի ապագա իրավական կարգավիճակը կսահմանվի «պարտադիր իրավական ուժ ունեցող կամարտահայտությամբ»:

Ինչպես ակնհայտ է հայտարարության տեքստից, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը՝ ի դեմս այդ երկրների ԱԳ նախարարների, փաստորեն, որպես պարտադրանքի գործոն ամրագրում են Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքները Ադրբեջանի վերահսկողությանը վերադարձնելու հրամայականը եւ բոլոր տեղահանվածների ու փախստականների իրենց բնակության նախկին վայրեր վերադառնալու իրավունքը: Ուշագրավ է, որ թեկուզ ենթատեքստային իմաստով ոչ մի ակնարկ չի արվում, նախ՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված ԼՂՀ տարածքների (Շահումյանի շրջան, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների մի շարք հատվածներ) վերադարձի, ապա եւ՝ Ադրբեջանից տեղահանված շուրջ կես միլիոն հայ փախստականների իրավունքների մասին (դժվար չէ կռահել՝ հայտարարության մեջ խոսքը վերաբերում է բացառապես ադրբեջանական ազգության քաղաքացիներին): Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակին, ապա այդ կապակցությամբ հայտարարության դրույթը, անորոշ ու հեղհեղուկ լինելով, չի դիմանում եւ ոչ մի քննադատության:

Նշենք նաեւ, որ հայտարարության մեջ խստիվ դատապարտվում են ուժի եւ դրա սպառնալիքի կիրառումը, ռազմաճակատում ապրիլին տեղի ունեցած վայրագությունները: Միեւնույն ժամանակ, դրանք այն աստիճան անհասցե են ամրագրված, որ բանից անտեղյակ միջազգային հանրության համար անհնար է տարբերակել ագրեսորին եւ այդ ագրեսիայից պաշտպանվողին, վայրագությունների դիմած եւ նույն այդ այդ վայրագություններից տուժած կողմերին: Այլ կերպ ասած՝ փաստաթղթի հեղինակները, կազմելով այն, իրականում առաջնորդվել են խորհրդային իրականությունից բոլորիս քաջ հայտնի համահարթեցման տխրահռչակ սկզբունքով:

Նույն այդ համահարթեցման եւս մեկ ուշագրավ դրսեւորում. հայտարարության հեղինակները կոչ են անում «Բաքվին եւ Երեւանին՝ հարգելու մայիսի 16-ին Վիեննայի գագաթնաժողովում եւ հունիսի 20-ին Սանկտ-Պետերբուրգի գագաթնաժողովում ընդունված համատեղ հայտարարություններում ամրագրված համաձայնությունները»: Թեկուզ նրանց իսկ՝ Մինսկի խմբի համանախագահ երկրների արտգործնախարարների համար վաղուց պարզ ու ակնհայտ է, որ այդ համաձայնություններից ոչ միայն խուսափում, այլեւ դրանց իրականացմանը բոլոր հնարավոր եւ անհնարին միջոցներով խոչընդոտում է բանակցող կողմերից միայն մեկը՝ Ադրբեջանը: Արդյոք կկարողանա՞ն միջազգային միջնորդները նոր տարում համոզել կամ պարտադրել Բաքվին, որպեսզի համաձայնի ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի իր մասում դիտարկման ու հետաքննության մեխանիզմների իրականացմանը: Կարծում եմ՝ դժվար թե: Քանզի Ադրբեջանի իշխանություններին համակած անպատժելիության զգացումն այսօրվա դրությամբ, ինչո՞ւ չէ՝ նաեւ մոտ ապագայում, ավելի ուժեղ է, քան կարգավորման միջնորդ երկրների կողմից Բաքվին պարտադրելու միասնական կամքը: Եթե կամքն այդ, իհարկե, գոյություն ունի առհասարակ:

Կա՞ այլ ելք: Անշուշտ: Բայց դա արդեն Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի խնդիրն է:

Խոսքիս ավարտին ուզում եմ նշել մեր համազգային միասնության ուժը խորհրդանշող այսպիսի մի իրողություն: Օրերս Լոս Անջելեսի բնակչուհի, հալեպցի արմատներով 85-ամյա Վիկտորիա Շաքարյանը, ով օրվա ցերեկային ժամերն անցկացնում է քաղաքի «Վիկտորիա» առողջապահական կենտրոնում, իմ հասցեով ուղարկել է ծանրոց՝ մեջը իր իսկ ձեռքով հունիսի կեսերից ի վեր գործած 50 զույգ տղամարդու եւ 8 զույգ կանացի տաք գուլպաներ՝ Արցախի դիրքապահ զինվորներին հանձնելու համար: Որպեսզի Հրեղեն Աքաղաղի տարվա ձմեռը տղաները եւ աղջիկները չմրսեն: Վիկտորիա մայրիկի խոսքով՝ դա նրա առաջին ուխտն է: Երկրորդ ուխտն է՝ գալ Հայաստան եւ համեղ կերակուրներ պատրաստել հայրենյաց պաշտպան զինվորների համար: Ծանրոցն անհապաղ հանձնելով Պաշտպանության բանակի շտաբ, իմացա, որ գրեթե նույնատիպ պարունակության ծանրոցներ են վերջերս ստացվել նաեւ Ֆրանսիայում ու Հայաստանում ապրող հայ մամիկներից: Վերհիշենք՝ այդպես էր նաեւ Երկրորդ աշխարհամարտի ահեղ տարիներին: Այդպես էր նաեւ քսաներորդ դարավերջի Հայոց ազատամարտի՝ Արցախյան հայրենական պատերազմի ոչ պակաս ահեղ տարիներին: Համոզված եմ՝ ոք չի կարող անտարբեր մնալ իրենց կյանքի դարավերջին հասած այդ ճերմակահեր հայուհիների հայրենասիրական քայլին: Ուստի, սիրելի ընթերցողներ, ձեզ հետ միասին որդիաբար խոնարհվում եմ նրանց լուսավոր կերպարների առջեւ, մաղթելով առողջություն ու արեւշատություն, հայոց աշխարհին՝ վերջնական խաղաղություն ու բարօրություն Հրեղեն Աքաղաղի տարում եւ գալիք բոլոր ժամանակներում:

Միքայել ՀԱՋՅԱՆ

Ֆիլմ ստեղծելն այն ճանապարհն է, որ պատմենք մեր պայքարի մասին



Հայտնի կինոռեժիսոր Ջիվան Ավետիսյանը ծնվել է Գյումրիում, ապրել Ստեփանակերտում, այժմ բնակվում է Երեւանում: Ռեժիսորական կուրսեր է անցել Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում: 2014-ից հանդիսանում է «Ֆիշ այ Արթ» մշակութային հիմնադրամի տնօրենը: Մեկ տասնյակից ավելի խաղարկային եւ նույնքան էլ վավերագրական ֆիլմերի հեղինակ է: Մասնակցել է «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին, «Ընդհատված մանկություն» ֆիլմի համար արժանացել Հրանտ Մաթեւոսյանի անվան հատուկ մրցանակի: 2013թ. «Ընդհատված մանկություն» ֆիլմով եւ «Թեւանիկ» ֆիլմի նախագծով մասնակցել է Կաննի 66-րդ միջազգային կինոփառատոնին, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության՝ «Լավագույն գիտական եւ ստեղծագործական աշխատանք» համահայկական մրցանակաբաշխության ժամանակ «Մեր սահմանը» վավերաֆիլմի սցենարի համար՝ որպես լավագույն սցենարի, արժանացել է մրցանակի:

- Պարոն Ավետիսյան, կցանկանայի կենսագրական որոշ մանրամասներ փոխանցեիք:

-1998 թվականին ավարտել եմ Ստեփանակերտի թիվ 9 միջնակարգ դպրոցը: Դպրոցին զուգահեռ հաճախել եմ մանկական ստեղծագործական կենտրոնի՝ Քաջիկ Հարությունյանի ղեկավարությամբ գործող թատերական խմբակ: Դպրոցն ավարտելուց հետո իմ ցանկացած բուհն այստեղ չկար, եւ Արցախի հանրային հեռուստատեսությունում սկսեցի աշխատել որպես լուսավորող, հետո՝ ռեժիսորի օգնական, ապա՝ ռեժիսոր: Այնուհետեւ զորակոչվեցի ժամկետային զինվորական ծառայության՝ 1999-2001 թթ.: Ծառայությունս ավարտելուց հետո մեկնեցի Երեւան՝ Թատերական ինստիտուտի խաղարկային կինոյի բաժնում սովորելու:

- Ի՞նչ ստեղծագործական ուղի եք ունեցել:

- Ավարտելուց հետո աշխատեցի Երկիր Մեդիա հեռուստաընկերությունում՝ որպես ռեժիսոր, ապա՝ 2009-2014 թթ.՝ որպես գլխավոր ռեժիսոր: Դրանց զուգահեռ, որպեսզի չկորցնեմ իմ մասնագիտական ունակությունները, նկարահանել եմ մի քանի կարճամետրաժ ֆիլմեր, որոնցից են «Իմ գտած մանկությունը», «Ղարաբաղ՝ թաքնված գանձ»: Առաջին լիամետրաժ ֆիլմս՝ «Թեւանիկը», ավարտել եմ 2014 թվականին, «Թեւանիկ»-ից հետո «Վերջին բնակիչը», որը 2016-ի նոյեմբերի16-ից ցուցադրվում է Երեւանի կինոթատրոններում, իսկ 2017-ի փետրվարի 2-ին կցուցադրվի Ստեփանակերտի «Վալեքս Գարդեն» հյուրանոցի կինոսրահում:

- Ինչի՞ մասին է «Վերջին բնակիչը»:

- «Վերջին բնակիչը» ֆիլմը պատմում է մի հայ հերոսի մասին, ում գյուղը տեղահանվել է ադրբեջանցիների կողմից, սակայն ինքը հրաժարվում է գնալ. ո՞ւր գնա 70-ին մոտ ծերունին, որը ժամանակին սիբիրյան աքսոր է տեսել, 2-րդ համաշխարհային պատերազմին է մասնակցել, բայց ունի նաեւ մի անձնական պատճառ՝ սիբիրյան աքսորի ժամանակ իրեն փրկած լիտվացի բուժքրոջ (որը մահացել է թոքաբորբից) որդեգրած աղջիկը, եւ որին նա թողել է Աբգարին: Աբգարը գյուղում մեծացնում է աղջկան, ամուսնացնում է: Աղջիկն ապրում է Սումգայիթում եւ 88-ին ականատես լինում գազազած ամբոխի սանձարձակություններին: Նրանք այրում են ամուսնուն, կորցնում է ամբողջ ընտանիքը եւ հոգեկան խանգարում ստանում: Աբգարը մնում է գյուղում ու փորձում ապրել, աղջկան բուժել: Կա նաեւ ադրբեջանցի իր վաղեմի ընկերը, որի աղջիկը ծննդաբերության խնդիր ունի: Ադրբեջանցի ընկերոջ մայրն ասում է, որ հնուց եկած մի սովորություն կա՝ պիտի ծնունդը քրիստոնյա ընդունի, որ հերթական երեխան չմահանա, ապրի: Քրիստոնյաներին բոլորին վտարել են: Իբրահիմը փորձում է սումգայիթյան հոգեբուժարաններից մեկում գտնել աղջկան, որպեսզի ծնունդն ընդունի: Նման աղջկա ճակատագրեր էլի կլինեն, քանի մարդկությունը շարունակվում է: Շատ կարեւոր մեսիջ կա այստեղ՝ դու քո տեսակը պահպանելու համար, այնուամենայնիվ, հակառակորդի կարիքն ունես: Դա մի համամարդկային արժեք է, որի կարիքը բոլորն ունեն: Ֆիլմի գաղափարը հենց դա է՝ համամարդկային արժեքները պահպանելը: Աբգարը տուն կհասնի՞, թե՞ ոչ: Ավարտը բաց է, թող հանդիսատեսը որոշի... Ինձ համար հետաքրքիր է պատմել մարդկանց մասին, ովքեր պատերազմի հետեւանքով հայտնվել են ծայրահեղ իրավիճակում: Մարդության ամենամեծ արժեքներից մեկն այն է, որ ցանկացած միջավայրում մարդ մնա, չվերածվի գազանի:

Ֆիլմը 5 երկրների համատեղ արտադրանք է՝ Հայաստան, Լիտվա, Շվեդիա, Լիբանան, ԱՄՆ: Մենք կարողացել ենք լավ սցենարի, գեղեցիկ պատմության արդյունքում տարբեր կինոշուկաներում ֆիլմը ներկայացնելով, համագործակցություն ձեռք բերել. շվեդական կողմն ապահովել է տեխնիկական աջակցություն, լիբանանյան կողմը՝ մասնագիտական, լիտվական կողմը՝ ամբողջ վիդիոաշխատանքը, որն արված է «Փոսթ-փրոդակշընն» հայտնի կինոստուդիայում եւ այլն: Միայն այդպես կարելի է հաջողության հասնել: Եթե օտարները մասնակցել են ֆիլմին, ուրեմն հասկացել են գաղափարը, հավատացել են հաջողությանը, սիրել են, եւ աշխարհն ավելի բաց է ընդունում այդ ֆիլմը: Ֆիլմի նպատակն է՝ աշխարհին պատմել Ղարաբաղի մասին: Նկարահանել ենք այնպես, որ ֆիլմը լինի մեր կոնֆլիկտի մասին: «Վերջին բնակիչը»-ը ֆիլմում 10 երկրների ներկայացուցիչներ են ներգրավված: Ֆիլմում խաղում են հայտնի դերասաններ, ինչպես, օրինակ՝ Ալեքսանդր Խաչատրյանը, նաեւ՝ պարսիկ, հույն հայտնի դերասաններ, կոմպոզիտորը Սերժ Թանկյանը, նաեւ Տիգրան Խաչատրյանը: Ֆիլմը դիտողներ կարող է քիչ լինեն Հայաստանում, բայց ավելի շատ դիտորդներ կունենա արտերկրում: Սցենարը գրվել է Ծովինար Խաչատրյանի «Գյուրջեւանի վերջին բնակիչը» պատմվածքի հիման վրա: Որպես այդպիսի՝ իրական պատմություն է: Նրա վրա աշխատել է ֆիլմի պրոդյուսեր Մասիս Բաղդասարյանը:

- Ինչպիսի՞ ռեժիսորական հնարքներ եք օգտագործել:

- Շատ լավ հարց տվիք: Ֆիլմում մի այսպիսի հաջողված քարոզ կա, որ սոսկ արտաքին շերտում «ուոդս ափ» պատմություն է սա, եւ ֆիլմի սյուժեն՝ պարզ, հասկանալի: Իսկ երբ մեկ շերտ ներքեւ ես նայում, ֆիլմի բոլոր առարկաները, դետալները եւ բոլոր հնչող խոսքերն իմաստավորվում են եւ, փաստորեն, մեկ գումարած մեկ՝ դառնում է ոչ թե երկու, այլ՝ երեք: Երեք շերտ կա, եւ սկսում է սիմվոլիկ շերտն աշխատել: Գաղափարական երրորդ շերտում վերջին բնակիչը ոչ թե Աբգարն է, այլ այն ադրբեջանցի աղջիկը, որին երկուսով՝ ինքն ու աղջիկն ուզում են փրկել: Այս առումով՝ վերացած ազգային պատկանելությունից, ֆիլմն իրականում ոչ թե ղարաբաղյան կոնֆլիկտի մասին է, այլ՝ մարդկության փրկության մասին, աշխարհը փրկելու մասին, բարության մասին, այն մասին, որ մի քանիսը կարող են փրկել մարդկությունը, որ անձդ վտանգելով՝ կարող ես աստվածային սիրով դիմացինիդ փրկել: Այս առումով՝ ռեժիսորական իմաստով ֆիլմը շատ խոսուն է, սյուժետային, գաղափարական, սիմվոլիկ իմաստով, խորքում թաքնված իմաստով: Ֆիլմում շատ են բաց վերջաբանները, որոնց վրա պիտի հանդիսատեսը խորհի:

Այդպիսի կոնֆլիկտների մասին, ասենք՝ սերբական, աբխազական կոնֆլիկտների, ֆիլմեր կան, որոնք արժանացել են համաշխարհային տարբեր նոմինացիաների:

- Կարելի է ասել, որ ֆիլմը հայ-ադրբեջանական հակամարտության մասին է՝ առանց ատելության չափաբաժնի:

- Ես կարծում եմ՝ ցանկացած հայ իր մեջ ունի ատելության մի որոշ չափաբաժին անմարդկայինի հանդեպ: Ֆիլմում կան դետալներ, երբ տեսնում ես այդ թշնամանքը, բայց ֆիլմը ատելության մասին չէ: Այն մարդկային ճակատագրերի մասին է, ովքեր հայտվել են պատերազմական իրավիճակում, եւ անկախ ամեն պարագայից, շատ նրբորեն մենք համամարդկային ճակատագրերից ենք խոսում: Ադրբեջանական հրամանատարը սպառնում է Աբգարին կտոր-կտոր անել. սա մեսիջ է: Այսպիսի ֆիլմեր աշխարհում շատ կան: Օրինակ՝ հայտնի կինոռեժիսոր Միքելանջելո Անտոնիոն ֆիլմեր ունի սառը պատերազմի մասին: Երբ նայում ես, դրանք ամբողջովին հակասովետական են, բայց առանց թշնամանքի բացահայտ ցուցադրման: Ես կարծում եմ՝ աշխարհը հիմա ամբողջովին փոխվել է, եւ ուղղակիորեն չես կարող ասել՝ այս մարդը լավն է կամ վատը: Պետք է այդ ամենն ասել իր արարքների միջոցով, պետք է կարողանալ խնդրակից սարքել մարդուն իր էմոցիաների միջոցով: Պարզ մարդու միջոցով պետք է կարողանալ ներկայացնել, ծառայել նպատակին՝ ժամանակի մեջ, ժամանակի միջոցով: Ինձ համար հետաքրքիր են այն ֆիլմերը, որոնք հասկանալի կլինեն օտարին: Մարդիկ կան, որ Հայաստանի տեղը չգիտեն, միայն հայկական կոնյակը գիտեն, մեկ էլ՝ գիտեն, որ քրիստոնյա երկիր ենք: Շատերը թյուր կարծիք ունեն ղարաբաղյան կոնֆլիկտի մասին: Ֆիլմ ստեղծելն այն ճանապարհն է, որ պատմենք մեր պայքարի մասին:

- Յուրաքանչյուր ռեժիսոր ֆիլմ ստեղծելով մտածում է, որ այն ժամանակի ընթացքում միջազգային ասպարեզ դուրս կգա, ինչ-որ փառատոնների կներկայացվի: Դուք ինչպե՞ս եք մտածում՝ կկարողանա՞նք այդ կինոարտադրանքը ներկայացնել որեւէ մրցանակի :

- Ֆիլմը ներկայացվել է «Ոսկե գլոբուս»-ի 74-րդ մրցանակաբաշխությունում առաջադրված 65 ֆիլմերի ցանկում, բայց չի նոմինացվել: Բայց եթե նշվել է իրենց կայքում, որին 40 մլն մարդ է հետեւում, «Լոս Անջելես Թայմս»-ն է գրել ֆիլմի մասին, դա հաջողությո՞ւն չէ: Ֆիլմը կմասնակցի տարբեր փառատոնների, կցուցադրվի աշխարհով մեկ: Ֆիլմն ունի արտասահմանյան դիստիբյուտերներ՝ արտ-հաուս մակարդակի մեջ. ամբողջ աշխարհում կցուցադրեն, կտարածեն, սա հաջողություն չէ՞: Սա երկար ու դժվար ճանապարհ է, բայց պետք է գնալ այդ ճանապարհով: Հայ ժողովուրդն այլ կարեւոր թեմա, քան արցախյան թեման է, կարծում եմ, չունի:

- Հետագա ի՞նչ պլաններ ունեք:

- Աշխատանք նոր սցենարի վրա, որը կոչվում է «Երկնքի դարպասներ»: Առայժմ փակագծեր չեմ բացի, բայց արդեն առաջարկներ ունենք արտասահմանից՝ Բեռլինի միջազգային կինոփառատոնին մասնակցելու համար. իհարկե, պատրաստվում եմ գնալ: Կցանկանայի նոր հրավերներ ստանալ, քանի որ ռեժիսուրան դա թիմային աշխատանք է:

Հարցազրույցը՝ Լիլիա ԲԱՂՐՅԱՆԻ

Խանձաձոր. աշխատող մարդկանց գյուղ

«Հելնեմ երթամ էս սարը, էս սարից էլ էն սարը, էն սարից էլ էս սարը, էս սարից էլ...». չգիտեմ, թե ժողովրդական այս քարատողը լեռնային հայրենիքի, կոնկրետ որ ճանապարհի մասին է, սակայն այն հիշեցի Հադրութի շրջանի Խանձաձոր համայնք տանող ճանապարհին: 4 ժամ տեւած ճանապարհն անցնում էր սարերի, հովիտների ու անծայրածիր անտառների միջով:

Խանձաձոր համայնքի համայնքային տարածքում է գտնվում նաեւ Հայկավան գյուղը: Թեեւ Հադրութի քարտեզի վրա երկու համայնքներն էլ նշված են, սակայն գյուղերն ունեն մեկ գյուղապետ:

1988-ին Խանձաձորն ադրբեջանցիների կողմից գրավվել եւ հայաթափվել էր: Բնակիչները ցրվել են Հադրութի շրջանով մեկ, որոշները տեղափոխվել են Երեւան եւ Ռուսաստան: Հայը կրկին ոտք է դրել գյուղ Արցախյան պատերազմից հետո: Վառված տները վերանորոգելու փոխարեն վերաբնակիչների մի մասը նոր տներ է կառուցել, մի մասն էլ՝ հաստատվել է գյուղից 5,5 կիլոմետր հեռավորության վրա գտնող Հայկավան գյուղում:

Այսօր Խանձաձորում ապրում է 102 բնակիչ, Հայկավանում՝ 56: Գյուղացիները զբաղվում են հողագործությամբ, անասնապահությամբ եւ մեղվաբուծությամբ: Տղամարդկանցից շատերը զինվորական են եւ բանվոր: Եկամտի աղբյուր է հանդիսանում նաեւ Խանձաձորի միջնակարգ ու Հայկավանի տարրական դպրոցները:

Հադրութի արեւմուտքում գտնվող այս համայնքում արտագաղթ գրեթե չի նկատվում: Ընդհակառակը՝ գյուղի ամեն երկրորդ ընտանիք բազմազավակ է: Հայկավանի բնակիչներին առաջարկվել է տեղափոխվել Խանձաձոր համայնք, սակայն նրանք չեն համաձայնվում: Բնակիչները երկու բնակավայրը շենացնելը կարեւոր են համարում:

Գյուղը չունի միջհամայնքային տրանսպորտ, սակայն համայնքին հատկացվել է շտապօգնության մեքենա: Պետք եղած դեպքում գյուղացիները դրանով են հասնում Հադրութ: Սակայն գրեթե ամեն մի ընտանիք իր մեքենան է ձեռք բերել, ինչպես ասում է գյուղապետարանի քարտուղարը՝ ամեն մեկն իր գլխի ճարը տեսնում է:

«Համակերպվել ենք, որ հեռու է մեր գյուղը: Ի՞նչ անենք: Եթե ձյուն է լինում, համայնքի ղեկավարը իր տեխնիկայով բացում է ճանապարհը: Դժգոհ չենք»,- ասում է գյուղապետը եւ նշում, որ եթե այդպես չլիներ, իրենք գյուղում չէին կարող մնալ:

Բազմազավակ ընտանիքները շատ են, սակայն գյուղում մանկապարտեզ չկա: Փոքրիկներն իրենց օրն անցկացնում են բնության գրկում:

Ամեն օր բախվելով այս խնդիրներին եւ ապրելով կտրված տեղամասում, բնակիչները երբեք չեն մտածել գյուղից հեռանալու մասին: Ասում են՝ գյուղը աշխատող մարդկանց տեղ է: Իսկ խնդիրները կամաց-կամաց կլուծվեն:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Նոր տարի, որ դեռ պիտի գա, կամ՝ անցնող տարվա երազը

«Երնե՛կ թե այս նոր տարին...»՝ ծանոթ սրճարանի մոտով ացնելիս ականջներս որսում են ծանոթ երգի բառերը, որոնք, ինչպես ամեն անգամ, այս անգամ եւս չեն թողնում առաջ քայլել, ստիպում են կանգնել եւ լարել լսողությունս այնպես, ասես առաջին անգամ եմ լսում երգի տողերը:

Մոտակա նստարանն ազատ է, բայց չեմ նստում: Թվում է՝ այսպես կանգնած ավելի լավ եմ մարսում երգի բառերը, եւ այն անբացատրելի արագությամբ թափանցում է մարմինս, հայտնվում երակներովս հոսող հեղուկի մեջ, եւ արդեն չեմ զգում՝ տաքացնո՞ւմ է, թե՞ սառեցնում. միայն զգում եմ մի բան՝ երբեւէ այսպիսի զգացողություն չեմ ունեցել...

Արդեն քանի տարի է՝ լսում եմ այս երգը, եւ արդեն քանի տարի է՝ հավատում եմ «երնե՛կ»-ին, որն այդպես էլ մնում է հասարակ մի բառ՝ «երնե՛կ»՝ մնալով իր մեջ ամփոփված անհասանելի իմաստին հավատարիմ: Արդեն քանի տարի է՝ հավատում եմ հայի վերջացող ցավերին, չարի կորստին ու բարու հաղթանակին: Հավատում եմ այնպես, ինչպես մանուկ ժամանակ հավատում էի տատիս հեքիաթներին, որտեղ միշտ հայտնվում էր անհաղթ հերոսն ու գլխատում յոթ գլխանի հրեշներին՝ փրկելով իր արքայադստերը գերությունից: Հավատում եմ ու ամեն անգամ դեռատի պատանու պես բախվում իրականությանը, հասկանում, որ կյանքը հեքիաթ չէ, որ կյանքում չարը երբեք չի կորչում եւ հրեշներն էլ միշտ չէ, որ գլխատվում են: Կյանքում ամեն բան այլ է, քանզի այն ինչ-որ մեկի ձեռքով գրված հեքիաթ չէ: Այն ամեն օր փոխվում է ինչ-որ մեկի, մեր բոլորի ձեռքով, եւ երբեմն մենք չենք կարողանում ճիշտ ղեկավարել նրա ընթացքը՝ տանելով այն խոտոր ուղղությամբ...

Ծանոթ սրճարանից քիչ այն կողմ գրություն է կախված՝ շատ մեծ-մեծ տառերով՝ «Թող Նոր տարին խաղաղություն բերի»: Խաղաղությո՛ւն. այս բառը խառնվում է երգի չմարող հնչյուններին: Ես քթիս տակ կրկնում եմ մերթ երգի բառերը, մերթ ծանոթ բառը՝ խա՛-ղա՛-ղո՛ւ-թյու՛ն: Մտածում եմ՝ տեսնես այս ցուցանակը գրողը կամ կախողը, կամ էլ այն պատվիրողը նույնպե՞ս ունեցել է այս զգացողությունը, նույնպե՞ս մտածել է

այս բառի մոգական ուժի եւ այն ունենալու անբացատրելի ցանկության մասին, տեսնես նա՞ էլ երբեւէ հավատացել է իր տատի հեքիաթներին ու երազել յոթգլխանի հրեշներին կործանելու եւ արքայադստերը փրկելու մասին... Տեսնես նա՞ էլ երբեւէ անցել է այս ծանոթ սրճարանի կողքով եւ կամ մեկ այլ վայրում լսել այս երգը... Տեսնե՞ս.. Մտքերիս ալեկոծումը կանգ է առնում կողքովս անցնող կնոջ ձայնից.

- Դու հավատո՞ւմ ես այս երգի բառերին:

- Այո, ինչո՞ւ չէ,- պատասխանում եմ անծանոթ մի շեշտով:

- Ես չեմ հավատում:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ այս Նոր տարին էլ մենակ պիտի դիմավորեմ, մենակ պիտի սեղան նստեմ. մենակ ի՞նչ Նոր տարի: Այս Նոր տարում երազանք չեմ պահի, որովհետեւ ամեն տարի նույն երազանքն եմ պահում եւ մի ամբողջ տարի սպասում եմ, որ վերջում դարձյալ նույն երազանքը պահեմ ու...

-Այս տարի հաստատ կկատարվի ձեր երազանքը:

-Չէ՛...

Վերջին «Է»-ն երկարում է. երկարում է այնպես, ինչպես փոքրիկի բերանից նոր հանված ծամոնը, որը նորից պիտի հայտնվի փոքրիկ բերանում ու նորից ծամվի, բայց արդեն չունենալով նույն համն ու հոտը...

- Իսկ դու կարո՞ղ ես այս անգամ իմ փոխարեն երազել, գո՞ւցե կատարվի:

- Այո, կփորձեմ, բայց ի՞նչ երազեմ:

- Երազիր, որ այս տարի Ամանորի սեղանի շուրջ նստած մայրը կարոտով չհիշի իր որդուն, ով այլեւս տուն չի գա եւ այլեւս չի ասի՝ մամ, թող այս տարին քեզ առողջություն բերի: Երազիր, որ սեղանի շուրջ նստած մանուկը անհամբեր չսպասի, որ Ձմեռ պապիկի հետ ներս կմտնի նաեւ իր հայրիկը, ում ամենեւին էլ Ձմեռ պապիկը չի տարել, այլ սարերից այն կողմ որոտացող գնդակները /չէ, Ձմեռ պապն այդ վայրերով հաստատ չի անցնում, թե չէ նրան էլ չեն խնայի գնդակները/ ...Երազիր, աղջիկս, լավ երազիր. գո՞ւցե ես չգիտեմ, թե ինչպես են ճիշտ երազում, եւ չեմ կարողանում այնպես երազել, որ այն կատարվի: Չէ, հաստատ ես ճիշտ չեմ երազում, այլապես ինչո՞ւ իմ երազանքը երբեք չի կատարվում...Չէ՛...

Վերջին «Է»-ն նորից երկարում է՝ այս անգամ կախվելով նրա հեռացող ոտնաձայներից՝ նմանվելով մե՛րթ խուլ հառաչանքի, մե՛րթ հավատացյալի կամացուկ աղոթքի...

Ես ուզում եմ վազել կնոջ ետեւից՝ չգիտեմ ինչու, չգիտեմ ինչ ասելու համար: Քարացած ոտքերիս տակ մնում են նրա «Է»-ի մահացած հնչյունները: Այդ պահին աչքերս թափանցում են սրճարանից ներս եւ գտնում երկար բոյով, կոկիկ հագնված բարմենի առույգ դեմքը, ով շարժվում է դեպի ձայնարկիչը եւ ձեռքի թեթեւ շարժումով նորից միացնում ծանոթ երգը՝ «Երնեկ թե այս Նոր տարին...»:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Ստեփանակերտի 12-րդ հիմնական դպրոցը

Արդեն 12 տարի է՝ գործում է Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցը: 1994 թ. ազատագրված Մարիբեյլու գյուղում բացված դպրոցի առաջին սաներն Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ, Խրամորթ, Փառուխ, Քյաթուկ եւ այլ գյուղերից տեղահանված բնակիչների երեխաներն էին: Գյուղի ազատագրման ժամանակ զոհված ազատամարտիկ Վարուժանի պատվին Վրեժավան անունն էր կրում գյուղը, իսկ 1996թ. վերանվանվում է Ստեփանակերտի Աջափնյակ թաղամաս, իսկ դպրոցը՝ Ստեփանակերտի հ.12 միջնակարգ դպրոց: 2008-2009 ուսումնական տարվանից կրթօջախը հիմնական կարգավիճակով է՝ 9 կոմպլեկտ դասարանով: Այժմ ուսանում է 91 աշակերտ եւ 1 նախադպրոցական խումբ՝ 23 երեխայի ընդգրկմամբ:

Սկզբնական շրջանում ուսումնական պարապմունքներն անց էին կացվում գյուղի բնակելի տներից մեկում, սակայն փոքրաթիվ սենյակների պատճառով պարապմունքներն ընթանում էին երկհերթ:

1998թ. դեկտեմբերին շահագործման հանձնվեց դպրոցական երկհարկանի տիպային շենքը, իսկ 1999թ. փետրվարի 13-ին՝ գյուղի ազատագրման օրը, հանդիսավորությամբ կազմակերպվեց դպրոցի բացման արարողությունը:

Դպրոցական շենքը, չնայած յուրաքանչյուր տարի ենթարկվում է ընթացիկ նորոգման, վերանորոգման կարիք ունի: Պատերազմի տարիներից ի վեր պատուհանները չեն թարմացվել, ջեռուցման պայմաններում էլ դպրոցական սենյակները չեն տաքանում: Մարզադահլիճի առկայության պարագայում սպորտային գույքի խնդիր կա:

Չնայած Ստեփանակերտի մյուս դպրոցների հետ համեմատ՝ աշակերտների թիվը քիչ է, սակայն դա չի խանգարում համապետական մրցույթներում արժանի տեղեր զբաղեցնելուն:

2007թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի քաղաքային փուլում «Արտադասարանական եւ արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար», 2014թ. «Դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգերում դպրոցը պարգեւատրվեց Ստեփանակերտի քաղաքապետարանի պատվոգրերով:

2001թ. սովորողների ուսուցման եւ դաստիարակության գործում ունեցած ծառայությունների համար տնօրեն Վանիկ Ղազարյանը պարգեւատրվել է ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրով: Ի դեպ՝ Վ. Ղազարյանին 2008թ. վստահեցին Ստեփանակերտի հ.5 դպրոցը:

2013թ. հոկտեմբերին հ.12 դպրոցը բարեկամական սերտ կապեր է հաստատել Երեւանի Վ. Համբարձումյանի անվան հ.12 դպրոցի հետ: Կատարվել են փոխադարձ այցելություններ եւ կրթական ոլորտում փորձի փոխանակում: Այժմ էլ բարեկամությունը երկու դպրոցների միջեւ շարունակվում է, կյանքի են կոչվում համատեղ ծրագրեր:

Ինչպես նշում է դպրոցի տնօրեն Էլմիրա Գաբրիելյանը՝ դպրոցն ունի լավագույն ավանդույթներ. պարբերաբար նշվում են բոլոր հիշարժան տոները, կազմակերպվում նպատակասլաց ու հետաքրքիր միջոցառումներ: Մեր այցելության օրն էլ դպրոցում նախատոնական եռուզեռ էր. պատրաստվում էին Նոր տարվա հանդեսին:

Համերաշխ ու կուռ է փոքրիկ, բայց մեծ գործի լծված Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը՝ գիտակցումով այն բանի, որ այսօրվա գերխնդիրը խաղաղության պահպանումն է, եւ այն համոզմամբ, որ իր դաստիարակած սերունդն Արցախ աշխարհի արժանի քաղաքացին ու պաշտպանն է լինելու:

Ամուր հիմքերի վրա է դպրոց-բանակ համագործակցությունը: Ուսումնական տարվա ընթացքում դպրոցականները զորամասում հանդես են գալիս համերգային ծրագրով, այցելում են դիրքեր, ծանոթանում զինվորական կյանքին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Վերա Զուլհակյան. Պատմական դեպքերի վկան ու մասնակիցը

Կան մարդիկ, ովքեր կերտում են պատմություն, եւ կան այդ պատմության իրական մասնակիցներ ու վկաներ, ովքեր իրենց կյանքով ու գործունեությամբ ապացուցում են, որ միայն հայտնի անհատականությունները չէ, որ ի վիճակի են փոխել իրադարձությունների ընթացքը: Այդպիսի անհատականություններից է Վերա Զուլհակյանը, որի հետ զրուցելու հնարավորություն ընձեռնվեց մեզ:

1966թ. աշխատանքի անցավ ԼՂԻՄ մարզգործկոմում՝ որպես նախագահի քարտուղար, այժմ էլ աշխատում է ԼՂՀ Ազգային ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայանի ընդունարանում՝ որպես քարտուղար: Արցախի համար բախտորոշ ժամանակաշրջանում նա եղել է իրադարձությունների կենտրոնում եւ, իհարկե, իր ներդրումն ունեցել դրանցում: Տիկին Վերան ավելի քան 50 տարվա աշխատանքային փորձի ընթացքում աշխատել է մարզգործկոմի նախագահների, Գերագույն խորհրդի նախագահների, Ազգային ժողովի նախագահների, տեղակալների հետ՝ Մ. Օհանջանյան, Ա. Ասլանով, Վ. Օսիպով, Ս. Բաբայան, Լ. Պետրոսյան, Վ. Պլիսով, Ա. Մկրտչյան...: Այս շարքը կարելի է երկար շարունակել: Եվ զարմանալի չէ, որ Արցախի քաղաքական կյանքում մեծ դերակատարություն ունեցած անձանց մասին ուրույն կարծիք ու հիշողություններ ունի, որոնց մի փոքր մասը միայն կարող ենք հանրայնացնել:

Մի կտոր չոր գաթան

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի նստաշրջանն ընդունեց որոշում՝ դիմել Ադրբեջանական ԽՍՀ-ին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու խնդրանքով: Բոլոր պատգամավորներն արդեն ստորագրել էին պատմական որոշումը: Փաստորեն, փաստաթուղթն օրինական ուժ ուներ, բայց ժողովրդի աչքին առանց կնիքի այն արժեք չուներ: Եվ ահա, հրապարակում հավաքված ժողովուրդը պահանջում է մարզգործկոմի նախագահից. «Осипов, печать, Осипов, печать» (Օսիպով, կնիքը): «Բայց կնիքն իր մոտ չէր, որտեղից տար խեղճ մարդը»,- ասում է տիկին Վերան: Զայրացած ժողովուրդը բռնում է մարզգործկոմի նախագահի վարորդ Վանյային եւ թույլ չի տալիս ուտելիք հասցնել նրան: Օսիպովը շաքարային դիաբետ ուներ եւ առանց ուտելիքի երկար չէր կարող դիմանալ: Վլադիմիր Վաղարշակին պատուհանից դուրս նայելով եւ ժողովրդի տրամադրությունը տեսնելով՝ չի համարձակվում դուրս գալ շենքից: Դարակներից մեկում գտնված չոր գաթայի կտորը իսկական փրկություն էր: Չի հիշում՝ երբվանից մնացած չոր գաթայի կտորը տալիս է Օսիպովին, վերջինս թեյի մեջ թաթախելուց հետո ուտում է՝ ասելով. «Վերա, Աստված պահի ըրախեքդ, աշկերիս լիսերը եկան տեղը»:

«Все будет ого» (ամեն ինչ լավ կլինի)

Տիկին Վերան պատմում է Լեոնարդ Պետրոսյանի հետ Ելցինի ու Նազարբաեւի հանդիպման մասին: Չի մոռանում նաեւ Ռուսաստանի նախագահի՝ իրեն ուղղված մի արտահայտությունը. «Не беспокойся, все будет ого» (Մի մտահոգվիր, ամեն ինչ լավ կլինի): «Ի՞նչ «օգո»՝ նրա գնալուց հետո պատերազմական գործողություններն են սկսվում»,- հիշում է տիկին Վերան եւ հավելում, որ մարզխորհրդի նախագահն իրեն որպես ռուս է ներկայացրել հյուրերին՝ ցանկանալով ցույց տալ, որ Արցախում ազգային խտրականություն չկա:

Հայոց պատմությունն ու մարզկոմի նախագահը

Մարզգործկոմի նախագահ Պլիսովին ուղղված հեռագրից իմանալով, որ վերջինիս ծննդյան օրն է, որոշում է նվեր անել, բայց այնպիսի մի նվեր, որ նրան ծանոթացնի մեր ժողովրդի պատմությանը: «Մուսա լեռան քառասուն օրը»ե գիրքն է նվիրում, եւ խորհուրդ տալիս անպայման ընթերցել. «Այդ մարդը պիտի իմանա չէ՝ մեր պատմությունը»,- ասում է նա:

Ի դեպ, տիկին Վերան հայրենասիրական, ազգային գրականության սիրահար է: Մեզ հետ զրույցի օրն էլ Մ. Շաթիրյանի «Արծաթե դար»-ն էր սեղանին, եւ զարմանում էր, թե ո՞նց մինչեւ հիմա այդ գիրքը չի ընթերցել:

Նռնակները եւ անձրեւանոցը

Դեռեւս ակտիվ ռազմական գործողություններ չէին սկսվել: Ստեփանակերտի Կրկժան արվարձանից հարեւանի հարսն է զանգում, թե տարածքը երկու շարքով օղակել են Սաֆոնովի զինվորները եւ արգելել ցանկացած շարժ: Հոկտեմբերի սկիզբն էր, մի տաք օր. թեթեւ հագնված, ձեռքին անձրեւանոց, դուրս է գալիս աշխատավայրից: Շենքի մոտ «Ուազով» սպասում էր Ռաֆիկը՝ իր քեռու տղան (զոհվել է Քարին տակի պաշտպանության ժամանակ): Մեքենա նստելուց հետո նա մի կապոց է տալիս, թե՝ վերցրու, թաքցրու: Պարզվում է՝ նռնակներ էին, պիտի տանեին Կրկժան, որ տղաներին ոգեւորեին, անհրաժեշտության դեպքում՝ թուրքերին վախեցնեին: Ո՞րտեղ տեղավորեր այդ կապոցը, որ չերեւար: Տիկին Վերան ելքը գտնում է. նռնակները դնում է անձրեւանոցի մեջ: Արվարձանին մոտենալիս ստիպված իջնում են մեքենայից: Հակառակի պես՝ անձրեւ է սկսվում, ինքն էլ անձրեւանոցը ձեռքին, թրջվելով տանում էր նռնակները: Ամբողջությամբ թրջվել էր, բայց, բարեբախտաբար, ոչ մեկը չի կասկածում, թե ինչո՞ւ է թրջվում, բայց անձրեւանոցը չի բացում: Զինվորներին ասում է, որ երեխաները տանը մենակ են, լացում են, եւ, չլսելու տալով արգելելու ձայները, առաջ է շարժվում: Ճանապարհը շատ քարքարոտ, խորդուբորդ էր: Իջնելուց ոտքերը վնասվում էին, բայց չէր զգում, որովհետեւ ավելի կարեւոր առաքելություն ուներ՝ պիտի նռնակները հասցներ տղաներին, ոգեւորեր: Տանկից անընդհատ լուսավորում էին շրջապատը, որ հանկարծ անցնող չլինի: Հենց լույսը դեպի իրենց էր ուղղվում՝ կռանում, կուզեկուզ առաջ էին գնում: Ծանոթ ճանապարհը, թվում էր, մի տարում անցան: Ճանապարհին հանդիպում են Սաֆոնովի երկրորդ շարքով կանգնած զինվորներին, որոնք շրջափակել էին տեղանքը: Նրանցից մեկը՝ սկզբից թվում էր, թե կմատնի, բայց հուշում է там ваши своят (այնտեղ ձերոնք են): Պարզվում է՝ Արմենավանից մի խումբ տղաներ էին եկել օգնության, բայց տեղանքին ծանոթ չլինելով՝ կանգնել էին: Տիկին Վերան խմբին անփորձանք առաջնորդում է մինչեւ նպատակակետ: Մի խումբ մարդկանց քայլելուց քարեր էին գլորվում, թուրքերին էլ թվում էր՝ մի զորամաս է մտել գյուղ: Վերջիվերջո, բարեհաջող տեղ են հասնում, տեղում գտնվողներին ոգեւորում, իսկ մեծ դժվարությամբ տեղ հասցված նռնակներն այդ օրն օգտագործելու կարիք չի լինում: Այս դեպքից հետո տիկին Վերային համեմատում էին Զոյա Կոսմոդեմյանսկայայի հետ:

Խաբուսիկ ուրախություն

ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի հետ էլ է աշխատել: Նշում է, որ շատ համեստ, խելոք անձնավորություն էր: Ափսոս՝ չեն թողել, որ աշխատի: Հիշում է Մկրտչյանի հանդիպումները Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Առաջին հանդիպումից հետո տխուր է վերադառնում: Երկրորդ հանդիպումից վերադառնալուց հետո շատ ուրախ էր, այնքան, որ արկի բեկորներից ծակծկված հնամաշ վերարկուն փոխարինեց նոր, կապույտ վերարկուով: 1992 թվականի ապրիլի 14-ին Մկրտչյանը 19:30-ին խորհրդակցություն էր հրավիրել: Տիկին Վերային հանձնարարել էր՝ բոլորին տեղյակ պահել, հետո գնալ տուն: Արդեն տանն էր, երբ լսեց Մկրտչյանի ողբերգական սպանության մասին: Միշտ առանց թիկնապահների էր շրջում Մկրտչյանը: Ասում էր՝ ես հյուր ո՞ւմ հինչ ընես, վեր ինձ հինչ անին: Նույնիսկ դուռը չէր կողպում: Տիկին Վերան հետո է հասկանում, որ վերջին հանդիպումից ուրախ վերադառնալը փաստորեն վատ նախանշան էր...

Որդիներն առաջին գծում

Տիկին Վերայի 3 զավակներն էլ՝ Կարենը, Ալեքսանդրը եւ Դանիելը, ակտիվորեն մասնակցել են պատերազմական գործողություններին: Միշտ թեժ կետերում էին:

Դանիելը Մարտակերտի շրջանի Մեծ Շենի պաշտպանության ժամանակ վիրավորվել է. երկրորդ կարգի հաշմանդամ է: Բայց, չնայած դրան, ապրիլյան պատերազմի ժամանակ առաջիններից մեկն էր, որ եղբոր՝ Կարենի հետ կամավոր մեկնեց առաջին գիծ:

Ալեքսանդրը (մարտական մականունը՝ Սաշկո) Կալինինգրադում էր ծառայում: Որոշել էր ծառայությունից հետո մնալ այնտեղ: Հեռավոր ծովային ճամփորդության էր պատրաստվում, բայց շարժումն սկսվելուն պես ընկերոջ հետ վերադառնում է հայրենիք: Ինքնաշեն զենքեր էր պատրաստում, տարբեր խմբերի անդամակցում՝ սկզբում՝ պարտիզանական, հետո՝ 8-րդ վաշտի: Նշանակվել է Շուշիի գումարտակի շտաբի պետ, հետախուզության հրամանատար: Եղել է բոլոր թեժ կետերում՝ Շուշի, Մալիբեյլու, Կուբաթլու, Խոջալու, Մարտակերտ, Զանգելան, Քարվաճառ, ու ոչ մի անգամ չի վիրավորվել: 1994թ. Մարտակերտի պաշտպանության վերջին փուլում կարեւոր հետախուզություն պետք է իրականացվեր, սակայն բոլորը խուսափում էին դրանից, քանի որ շատ վտանգավոր էր: Ալեքսանդրը՝ թեպետ գումարտակի շտաբի պետ էր, առաջադրանքն ինքը ստանձնեց: Ցավոք, այդ գործողությունը նրա համար ճակատագրական եղավ: Խումբն ականի վրա պայթում է. 5 հոգի զոհվում են, 6-ը՝ վիրավորվում: Զոհվածների մեջ էր նաեւ Սաշկոն... Դեռեւս կենդանության ժամանակ Ալեքսանդրն ստացել էր «Մայրական երախտագիտություն» մեդալ, հետմահու՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան: Որդեկորույս մայրը շատ է տառապում, բայց նշում է, որ որդին իզուր չի արյուն թափել. այս անկախության, պետականության համար է զոհվել: Տիկին Վերան հիանում է՝ տեսնելով կենդանի, աշխույժ քաղաքը, բարկանում՝ յուրաքանչյուր արտագաղթողի մասին լսելիս: Բա մարդ իր օջախը, հայրենիքը կթողնի, գնա:

Անդրանիկի զինվորը

Տիկին Վերան ծնվել է 1946 թվականին, երբ հայրն արդեն 64 տարեկան էր: Հոր միակ զավակն է: Եվ, որպեսզի հայրական օջախի լույսը չմարի, մեծ տղային ամուսնացնելուց հետո առաջարկում է ապրել այնտեղ: Հայրը՝ Դավիթ Զուլհակյանը, Օզանյանի զինվորն էր, Տավուշից, արմատներով՝ Արեւմտյան Հայաստանից: Դեռ 18 տարեկան չկար, երբ հեռացավ Չինարի գյուղից եւ զինվորագրվեց Օզանյանի խմբին: Երբ Անդրանիկի զորքը հեռանում է Արցախից, Դավիթ Զուլհակյանն ամուսնանում է արցախուհու հետ, մեկնում Վլադիկավկազ եւ որոշ ժամանակ ապրում այնտեղ: Հայտնի վաճառական էր. կուլակաթափության հետեւանքով զրկվում է ունեցվածքից, վերջին միջոցներով հասնում Արցախ եւ Ստեփանակերտի մոտակայքում գտնվող Կրկժան արվարձանում տուն կառուցում:

Այսօր տիկին Վերան աշխատում է ԼՂՀ Ազգային ժողովում: Աշխատավայրում տարիների փորձ ունեցող կինն ստեղծել է հաճելի եւ հյուրընկալ մթնոլորտ: Սեղանից անպակաս են թարմ ու բուրավետ ծաղիկները, որ ստանում է գործընկերներից: Բոլորն իրենց աշխատանքային օրը սկսում են տիկին Վերային բարեւելով եւ ավարտում նրան հաջողություն մաղթելով: Գործընկերների համար նա վստահելի ու անփոխարինելի խորհրդատու է: Երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքի համար նա 2011 թվականին ԱԺ նախագահի կողմից պարգեւատրվել է ԼՂՀ հռչակման 20-ամյակի հուշամեդալով, իսկ 2012 թվականին ԼՂՀ նախագահի կողմից «Երախտագիտություն», նույն թվականին՝ ՀՀ ՊՆ-ի կողմից ՀՀ զինված ուժերի 20-ամյակին նվիրված հոբելյանական մեդալներով:

Ի դեպ, դեկտեմբերի 23-ին լրացել է տիկին Վերայի 70-ամյակը, ինչի կապակցությամբ թերթի խմբագրակազմը ջերմորեն շնորհավորում է նրան:

Հ.Գ.-Հետաքրքիր ու բովանդակալից զրույցից հետո տիկին Վերան հյուրասիրեց տաք թեյով ու գաթայով՝ կատակելով, թե գաթան թարմ է:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**